

ԹՈՒՐՔԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԸ ԼԱԻՍՏԵՍ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐ ԾՐԱԳԻՐՈՎ

ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի 63-րդ նստաշրջանի առջին իր ունցած լույսի ընթացքին թուրք-իոյ նախագահ Աբդուլա Գիլլ յայտարար է թէ, իր երկրի կողմէ առաջարկուած Համագործակցութեան եւ կաշտակցութեան ծրագիրը կը նպաստէ Կովկասի մէջ սառեցուած հակամարտութիւններու լուծման, որոնց շարքին՝ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման».

«Ես անկեղծօրէն կը հաւատամ՝ դրական հեռանկարը, որ այժմ ստեղծուած է, կը նպաստէ սառեցուած հակամարտութիւններու, որոնց շարքին գրաւուած Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման՝ տարած քայլին ամբողջակապէս սկզբունքի համաթեքստին մէջ», - աւելցուցած է ան:

Յայտարարելով, որ իր գաղափարին հաւանութիւն տուած են տարածաշրջանի բոլոր երկրները, Գիլլ միաժամանակ համոզմունք յայտնած է, թէ այդ փլաթֆորմը կրնայ գործիք դառնալ տարածաշրջանին մէջ վստահութեան մթնոլորտ ստեղծելու եւ ընդհանուր խնդիրները ժողովրդավարական ճանապարհով քննարկելու համար:

Թրքական լրատուամիջոցներու հաղորդմամբ, թուրքական փլաթֆորմի մանրամասնութիւնները քննարկուած են նաեւ երկրի

Շաբ.ը էջ 4

10,000 ՀԱՅՈՐԴԻՆԵՐ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ



Հայաստանի անկախութեան տարեդարձի փառատօնը Կլէմտէյի մէջ

Կլէմտէյի քաղաքի հայահոծ գանգուածը մեծ սպասումով, ամէն տարի, Սեպտեմբեր 21-ին կը հաւաքուի քաղաքի «Verdugo Park»-ին մէջ, նշելու համար Հայաստանի անկախութեան տարեդարձը: Ձեռնարկը տեղի կ'ունենայ առաւօտեան ժամը 11էն սկսեալ եւ կը տեւէ մինչեւ երեկոյեան ժամը 7:00:

Այս տարի եւս, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Հ.Մ.Մ.ին, Հայ Ամերիկեան Խորհուրդի եւ «Կայծ» Երիտասարդական Միութեան, շուրջ 10,000 հայերու եւ օտարներու ներկայու-

թեան նշուեցաւ Հայաստանի Անկախութեան 17րդ տարեդարձը, ժողովրդային հաւաք-ֆեսթիվալի ձեւին տակ: Առաւօտեան ժամերէն սկսեալ, խանդավառ եւ հայրենասէր անհատներու, շատեր իրենց ամբողջ ընտանիքներով, ամբողջ օրը ներկայ գտնուեցան տօնակատարութեան, որու ընթացքին տեղի ունեցան պաշտօնական ելոյթներ, ազգային երգեր, պարային կատարումներ, փոքրիկներու եւ մեծերու համար տարբեր տեսակի խաղեր, համադամ ճաշերու մատուցում, ինչպէս նաեւ բազմատեսակ առարկայ-յուշանուէր-

ներու վաճառք, յատուկ կառուցուած տաղաւարներու մէջ: Ամբողջ օրը մարդիկ վայելեցին յայտագիրը, որուն հեզասահ ընթացքին կ'ընկերանար Սեպտեմբերի եղանակին մեղմ եւ տանելի հանգամանքը:

Օրուայ հանդիսավարութիւնը, ինչպէս անցնող տարիներուն, այս տարի եւս ստանձնած էր հաւատաւոր Ներ Սերնդական, եւ «Նոր Սերունդ» հեռատեսիլի համակրելի հաղորդավար, ընկ. Ստեփան Յովակիմեան, իրեն գործակից ունենալով

Շաբ.ը էջ 5

Ս.Դ.Յ.Կ. ՀԱՅ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ

Յառաջիկայ Նոյեմբեր 4-ին տեղի ունենալիք Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութիւններուն առթիւ, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) պաշտօնական յայտարարութեամբ մը իր գորակցութիւնը յայտնեց Դեմոկրատ Կուսակցութեան թեկնածու՝ Պարաք Օպամային:

«Նկատի առնելով Ամերիկահայութիւնը շահաքրքրող հարցերու շուրջ անոր կողմէ հետապնդումը եւ յանձնառու կեցուածքը, Հայ Ամերիկեան Խորհուրդը կը յայտարարէ իր գորակցութիւնը ծերակուտական Պարաք Օպամային՝ յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն», - ըսուած է ՀԱԽ-ի յայտարարութեան մէջ:

Ծերակուտական Պարաք Օպամա եւ փոխնախագահի թեկնածու ձօ Պայտըն միշտ եղած են թունդ պաշտպաններ՝ Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու սերտացման: Ծերակուտական Պայտըն անխոնջ կերպով պաշտպանած է Հայկական



Դեմոկրատ Կուսակցութեան նախագահական թեկնածու՝ Պարաք Օպամա

Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւերը եւ որպէս նախագահ, Ծերակուտի արտաքին յարաբերութեան յանձնաժողովի ան եղած է Ամերիկահայութեան վստահելի

Շաբ.ը էջ 4

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԲՆՆԱՐԿՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼԸ ԿԸ ԿՂՊԵ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՀԵՏ

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան թրքական «Միլլիէթ» թերթին տրուած հարցազրոյցի մը ընթացքին եկաւ անուղղակի կերպով հաստատելու թրքական մամուլին կողմէ այս օրերուն շրջան ընող այն տեղեկութիւնները թէ, Հայաստանի եւ թուրքիոյ արտաքին գործոց նախարարները, այս շաբթուայ ընթացքին Նիւ Եորքի մէջ պիտի ստորագրեն համաձայնութիւններու փաթեթ մը, որոնց շարքին նաեւ՝ Հայոց Ցեղասպանութիւնը քննարկող պատմաբաններու յանձնաժողովի կազմութեան շուրջ:

«Որեւէ յանձնաժողով ստեղծելուց առաջ լաւ կը լինէր դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել եւ բացել սահմանը: Այդ ժամանակ մենք կարող ենք ստեղծել տարբեր յանձնաժողովներ եւ են թայանձնաժողովներ՝ ցանկացած հարցով», - յայտարարած է Սերժ Սարգսեան թուրքական «Միլլիէթ» թերթին, անդրա-

դառնալով պատմաբաններու հայ-թրքական համատեղ յանձնաժողովի թեմային:

Սարգսեան տարօրինակ նկատած է Հայոց Ցեղասպանութեան առնչութեամբ նման յանձնաժողովի կազմակերպող որոշումներու ճանաչման վերաբերող հարցերը. - «Քանի որ, ի վերջոյ, մի խումբ ակադեմիկոսներ եւ պատմաբաններ նստելու են եւ ինչ-որ բան ասեն: Ասենք, ես ընդունում եմ նրանց որոշումը: Իսկ եթէ իմ յաջորդը գայ եւ ասի՝ «ես չեմ ընդունում»: Այլ խօսքով, այդ յանձնաժողովի որոշումը չի կարող պարտաւորեցնող լինել: Դա կարող է լինել միայն առաջարկ կառավարութիւններին եւ որոշում ընդունողներին»:

Իսկ «Թրքիշ Տէյլի Նիւզ»-ի կը տեղեկացնէ, որ նոյն հարցազրոյցի ընթացքին Սերժ Սարգսեան նաեւ յայտարարած է, թէ Հայաստան տարածքային պահանջներ չունի թուրքիայի նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՍԱՍՈՒԼ

ՎԻՐՏՈՒԱԼ ՍԱԴՐԻՉՆԵՐ ԵՒ ՄԻԱՆԳԱՍԱՅՆ ԻՐԱԿԱՆ ԴԱՎՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 26-ին կայանա- լիք հանրահավաքին ընդառաջ՝ շա- րունակում են բուռն քննարկում- ները, թէ ճիշտ էր արդեօք նախորդ հանրահավաք երկու ան- գամ յետաձգելը, այնուհետեւ՝ ի վերջոյ կայացած հանրահավաքից յետոյ երթ չանցկացնելը:

«Տարեգիրի» լրագրողներին հասու շրջանակներում մեծամաս- նութիւն են կազմում Համաժող- ովրդական շարժման առաջ- նորդների պատճառաբանութիւն- ները հիմնաւոր համարողները: Իրօք, համոզիչ է հնչում փաստար- կը, թէ խոհեմութիւնը, հաւասար- ակշուռածութիւնը, իրատեսու- թիւնը չի կարելի ստորադասել արկածախնդրութեանն ու քեալ- լագոյցութեանը»:

Ինչն է, սակայն, ուշագրաւ: Համեմատենք իշխանութեան եւ ընդդիմութեան՝ բովանդակա- յին առումով իրարամերժ, հա- կոտնեայ, ձեւի առումով՝ միան- ման բացատրութիւնները, որ ըն- կած են նրանց գործունէութեան հիմքում եւ որոնցով պատճառա- բանում են իրենց քայլերը:

Մերժելով հանրահավաք անց- կացնելու տաննակ յայտեր՝ իշխա- նութիւնները բերում են թէեւ ան- հեթեթ, բայց անփոփոխ մի «հիմ- նաւորում», այն է՝ օպերատիւ տե- դեկութիւններ են ստացուել, որ հանրահավաքի օրը նախապատ- րաստում են սաղրանքներ, եւ որ այդ սաղրանքները որոշակի սպառ- նալիք են ներկայացնում հասարա- կական անվտանգութեանը... Աւրիթ եղել է այս անմտութեանը հակա- դարձելը՝ եթէ իրօք կան այդ տեղեկութիւնները, ինչն է խան- գարում հասարակութիւնից մեկու- սացնել սոյն սաղրիչներին, ինչո՞ւ է իշխանութիւնը հանդուրժում նրանց գոյութիւնը. գուցէ սաղ- րիչները իշխանութեան գործիք- ներն են, որ այդպէս խնամքով թաքցում են, եւ որոնք ի յայտ են

զալիս բացառապէս հանրահավաք- ների յայտերի առիթով:

«Հաւաստի տեղեկութիւններ են ստացուել, որ իշխանութիւննե- րը նախապատրաստել են բախում, այդ պատճառով էլ որոշեցինք երթ չանել», - մօտաւորապէս սա էր ընդդիմադիր առաջնորդների փաս- տարկը, որ հնչեց Մատենադարա- նի հարթակից: Այսինքն՝ դարձեալ նոյն «օպերատիւ տեղեկութիւննե- րը», բայց այս անգամ՝ ոչ թէ ինչ- որ յօրինուած, վիրտուալ կամ սե- փական շահերը սպասարկող, այլ միանգամայն իրական, արիւնար- բու եւ ստորաքար չսաղրիչներ, ճիշդ կը լինի ասել՝ դահիճների մասին:

Շարժման մէկ տարուայ պատ- մութեան ընթացքում սա առաջին եւ միակ պահն է, երբ իշխանու- թիւնը փորձում է հանդէս գալ խաղի կանոնները թելադրողի դե- րում: Ոչ նախընտրական փոլում, ոչ ահաբեկումներով եւ կեղծիքնե- րով անցկացում ընտրութիւննե- րի ժամանակ, ոչ անգամ Մարտի 1- ին ու դրան յաջորդած արտակարգ դրութեան պայմաններում, ոչ քաղ- բանտարկեալների դէմ իրականաց- ուած ու շարունակուող հաշուե- յարդար-դատավարութիւններում իշխանութիւնը չի տիրապետել իրավիճակին, օրինական դաշտում չի վերահսկել այն, չի եղել իր կամքը թելադրողի դերում: Այժմ, ահա, փորձում է խլել նախաձեռ- նութիւնը եւ ուղղորդել ընդդի- մութեան գործողութիւնները: Ճիշդ է՝ ուժային մեթոտներով: Կը կարողանայ՞ արդեօք Շարժումը հակաքայլեր ձեռնարկել: Այս հար- ցի պատասխանը կը տայ նախ սեպտեմբերի 26-ին հանրահավաքը, այնուհետեւ՝ Սեպտեմբերի 28-ին կայանալիք Կենտրոնի թաղապետի ընտրութիւնը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՏԱՐԵԳԻՐ»

«ՄՏԱՑԱԾԻՆ ՏԵՐՄԻՆ»

Երբ ոեւէ լրագրող կամ իրա- ւապաշտպան մեր նման երկրի իշ- խանութեան ոեւէ ներկայացուցչի հարցնում է՝ «բա ինչպէ՞ս կը լինի քաղբանտարկեալների հարցը», նրանք, լաւ սովորած դասի նման, պատասխանում են՝ «մեր երկրում քաղբանտարկեալներ չկան, որով- հետեւ մեր Քրեական օրէնսգրքում նման եզր գոյութիւն չունի»: Այդ «փայլուն փաստարկը», օրինակ, բերում է ԵՆԽՎ-ում ադրբեջանա- կան պատուիրակութեան ղեկավար Սամեդ Սեիդովը. «Եթէ խօսենք «քաղբանտարկեալ» տերմինի մա- սին, ապա այդ տերմինի իրաւա- կան բնորոշման չափանիշներ չկան: Դա բացարձակապէս մտացածին, չգործող տերմին է»: Դե, եթէ տերմինը մտացածին է, ուրեմն կարելի է պատժել եւ բանտերում պահել «անցանկալի» քաղաքական գործունէութեամբ զբաղուող մի քանի տասնեակ մարդու, ինչը եւ արւում է Ադրբեջանում՝ ոչ թէ մի քանի ամիս, ինչպէս մեզ մօտ է, այլ տարիներ շարունակ: Ընդ որում, հասկանալի է, որ այդ մարդկանցից ոչ մէկին քաղաքական մեղադրանք չի առաջադրուել՝ յօդուածները, բնականաբար, միմիայն քրէական են:

Որքան յայտնի է, այսօր աշ-

խարհի ոչ մի երկրի օրէնսդրու- թեան մէջ չկայ «քաղաքական յան- ցագործութիւն» հասկացութիւն, բոլոր քաղաքական հետապնդում- ներն իրականացում են քրէականի քողի տակ:

Եթէ որեւէ բան օրէնսդրորէն ամբողջութեամբ չէ, դա չի նշանա- կում, որ երեւոյթը գոյութիւն չու- նի իրականութեան մէջ: Օրինակ, ՀՀ որեւէ օրէնսգրքում գրուած չէ՝ «սափրագլուխները օլիգարխներին եւ որոշ պաշտօնեաներին ենթար- կուող գինուած խմբաւորումներ են, որոնք կոչուած են լուծել տնտեսական եւ քաղաքական խնդիր- ներ»: Բայց մենք հո գիտենք, որ այդ խմբաւորումները գոյութիւն ունեն: Հիմա եթէ Հայաստանում մարդկանց ազատագրկում եւ դա- տապարտում են ընտրութիւննե- րին ու ընդդիմութեան հանրահա- վաքներին ակտիւօրէն մասնակցե- լու համար եւ հրապարակուած պաշտօնական փաստաթղթերում (այդ թւում՝ գաղտնալուծումներում) որեւէ ապացոյց չեն բերում, որ այդ մարդիկ հրահանգ են տուել մեքե- նաներն այրելու կամ խանութները թալանելու, ինչպէ՞ս եւ պիտի անուանեն այդ մարդկանց:

Շարք էջ 3

ԲԱ ՂԱՐԱԲԱՂԸ ԾԱԽԵԼՈՒ ԴԵՍ ԲՈՂՈՔՈՂՆԵՐՆ Ո՞ՒՐ ԵՆ

Ղարաբաղեան խնդրի շուրջ ակնյայտօրէն ինչ-որ շատ ակտիւ գործընթացներ են տեղի ունենում, բայց, չգիտես ինչու, Հայաստանում քար լուծիւն է: Յամենայն դէպս, իշխանական շրջանակներից ձայն- ծպտուն չկայ: Դաշնակներն, իհարկէ, ժամանակ առ ժամանակ ինչ-որ դժգոհ բաներ են փնթփնթում, բայց դրանով էլ ամէն ինչ աւարտուած է: Սերժ Սարգսեանն ընդհանրապէս զերադասում է այս թեմայով չիօ- սել, եւ հասարակութեանն այլ բան չի մնում, քան փորձել միջազգային լրատուութիւնը վերլուծելով կու- հել, թէ ինչ է տեղի ունենում իրականում:

Եւ այսպէս, ներկայացնենք միայն յայտնի փաստերը: Սերժ Սարգսեա- նի հետ հանդիպումից յետոյ Գիւլը յայտարարեց, թէ իր տպաւորու- թեամբ, Հայաստանը պատրաստ է վերադարձնել գրաւեալ տարածքնե- րը: Բնականաբար, ոչ Սերժ Սարգս- եանը, ոչ արտգործնախարարութիւնն առ այսօր չեն յայտարարել, թէ այդ տպաւորութիւնը սխալ էր: Ինչեւէ: «Պատմական այցից» անմիջապէս յետոյ թուրքիայի նախագահը յայ- տարարեց, թէ պատրաստ է իր աջակցութիւնը բերել Ղարաբաղեան խնդրի կարգաւորման գործում: Սերժ Սարգսեանը ողջունեց դա՝ բացատրելով, որ յիմարութիւն կը լինէր աջակցութիւնից հրաժարուե- լը: Այս մասով ամէն ինչ կարծես թէ պարզ է. Սերժ Սարգսեանը Գիւլին հասկացնում է, որ պատրաստ է գրաւեալ տարածքները վերադարձ- նել, Գիւլն էլ այս ուրախ լուրն առած շտապում է Բաքու՝ աչքալու- սանքի:

Հիմա անդրադառնանք Ռու- սաստանի եւ ԱՄՆ-ի դիրքորոշում- ներին: Նախ Ռուսաստանի արտ- գործնախարարը յայտարարեց, որ Հարաւային Օսիայի եւ Աբխազիայի իրավիճակները տարբեր են Ղարա- բաղի շուրջ ստեղծուած վիճակից (այսինքն՝ Ռուսաստանը ԼՂՀ անկա- խութիւնը չի ճանաչի), յետոյ Դմիտր- րի Մեդվեդեւը հանդիպեց Ալիեւի հետ: Ալիեւի վաղ Ալիեւը Բաքուում հանդիպել էր ԱՄՆ փոխնախագահի հետ ու մերժել էր նրա առաջարկը Ռուսաստանը շրջանցող գազատար կառուցելու վերաբերեալ: Գրեթէ բոլոր միջազգային վերլուծաբան- ները միաբերան պնդում են, որ Ռուսաստանն ամենայն հաւանակա- նութեամբ կը հրաժարուի իր «ուզ- մավարական դաշնակից» Հայաս- տանից՝ ադրբեջանական գազի դիմաց (Ռուսաստանը մտադիր է ցանկացած գնով գնել ադրբեջանա- կան ողջ գազը՝ Եւրոպայում մենաշ- նորհային դիրքերը պահպանելու համար): Ինչ վերաբերում է ԱՄՆ դիրքորոշմանը, ապա Միւնխի խմբի ամերիկացի համանախագահ Մեթիւ Բրայզան նախօրէին յայտարարեց, թէ յատկապէս Հարաւային Օսիայի դէպքերից յետոյ ԱՄՆ-ը միշտ կանգ- նած է լինելու Ադրբեջանի կողքին եւ անվերապահօրէն պաշտպանում է այդ երկրի տարածքային ամբող- ջականութիւնը: Ալիեւին, նա յայտա- րարեց, թէ թուրքիան կարող է Հայաստանին օգնել՝ հանդէս գալ աւելի ճկուն դիրքերից:

Հիմա փորձենք հասկանալ այս ամէնը: Փաստօրէն, ԱՄՆ-ը բացա- յայտօրէն Ադրբեջանի կողքին է, իսկ Ռուսաստանն առաջժամ առեւտուր է անում (թէեւ արդէն յայտարարել է, որ Ղարաբաղը Հարաւային Օսիայի է): Բնականաբար, առեւտուր է

անում Ադրբեջանի հետ, որովհետեւ նրանից վերցնելու բան ունի, իսկ Հայաստանից՝ արդէն չունի: Եւ ստաց- ւում է, որ «մէջների լաւամարդը» թուրքիան է: Ինչո՞ւ: Շատ պարզ պատճառով. որովհետեւ Հայաստանն ինչ-որ բան կարող է ակնկալել միայն թուրքիայից (սահմանի բացումը նկատի ունենք): Թուրքի- ան նոյնպէս մեզանից ակնկալիք ունի (համատեղ յանձնաժողովի ստեղծումը եւ դրանով իսկ Յեղաս- պանութեան միջազգային ճանաչ- ման գործընթացի կասեցումը): Ի դէպ, յանձնաժողովի մասին, թուրք եւ ադրբեջանցի պատմաբաններն արդէն իսկ համատեղ յանձնաժողով են ստեղծել, որը պիտի «պատուի հայերի դիմակը» եւ աշխարհին ցոյց տայ, թէ այդ երկու ժողո- վուրդների գլխին ինչ են բերել հայերը: Յանձնաժողովի պատուա- ւոր նախագահն էլ թուրքիայի նախ- կին նախագահ Սուլէյման Դեմիրելն է: Սա՞ իմիջիայլոց:

Ինչ է ստացւում: Ստացւում է, որ Սերժ Սարգսեանը հայ-թուրքա- կան սահմանը բացելու դիմաց թուրքիային խոստացել է համատեղ յանձնաժողով ստեղծել, ադրբեջան- ցիներին էլ խոստացել է (յայտնի չէ ինչի դիմաց) վերադարձնել գրաւ- եալ տարածքները: Կարող էք վստահ լինել՝ այս երկու պնդումներից որե- ւէ մէկը ՀՀ իշխանութիւնները չեն հերքի:

Բայց իշխանական քաղաքա- կան ուժերին այս ամէնը չի հե- տաքրքրում. նրանք շատ աւելի կարեւոր գործով են զբաղուած՝ որոշում են, թէ կենդանակերպի ինչ նշանի տակ պիտի ծնուած լինի Աժ նախագահը, ու թաքուն հաշուում են իրենց գրպանների արծաթը: Որ յանկարծ մէկինը միւսինից շատ կամ քիչ լինի:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱՄԱԹԱԹԵՐԹ՝ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉՄԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Մրջամի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՊԱՍՏԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՉՍ ՊԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ՝ ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ Գեո. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ
ՇՆՈՐՀԱԴՈՐՈՒՄ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻ

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխավորած Հայ Ազգային Կոնգրեսը յայտարարութեամբ է հանդէս եկել, որում շնորհաւորում է ամբողջ հայ ժողովրդին Անկախութեան տօնի առթիւ:

«1991 թուականի Սեպտեմբերի 21-ին, հայ ժողովրդի շուրջ երեքուկեսամեայ համաժողովրդական շարժումը պսակուեց Հայաստանի անկախութեան հռչակմամբ: Կատարուեց հայ ժողովրդի դարաւոր երազանքը. իր բնօրրանում՝ բուն Հայաստանում, մօտ հազարամեայ ընդմիջումից յետոյ ձեռք բերուեց այն գերագոյն արժէքը, որ ազգի յարատեւման, զարգացման, բարգաւաճման ու արժանապատիւ կեանքի առաջին գրաւականն է», - ասուած է Հայ Ազգային Կոնգրեսի կենտրոնական գրասենեակի տարածած յայտարարութիւնում. - «Անկախութիւնը մեզ սովորեցրեց նպատակների իրականացման հիմքում դնել սեփական ուժերին ապաւինելը: Վերջին հազարամեակում միջուկային զենքերի դռներին նայող, նրանցից օգնութիւն ակնկալող Հայաստանը, անկախ պետականութեան պայմաններում կարողացաւ ինքը երաշխաւորը լինել օտարուած իր մի մասի՝ Լեւոնային Ղարաբաղի փրկութեան եւ գոյատեւման»:

«1991-ին յաղթահարուեցին անկախութեան արտաքին խոչընդոտները: Այսօր հայ ժողովուրդը համախճուել է նոր, իր մասշտաբներով առաջինին չգիշող նոր համաժողովրդական շարժման մէջ՝ յաղթահարելու համար ներքին արգելապատնէշը՝ դուրս բերել երկիրը պետականութեան այլասերման, Անկախութեան ամենավեհ գաղափարի վարկաբեկման կործանարար ճանապարհից», - յայտարարում է Հայ Ազգային Կոնգրեսը՝ ամփոփելով. - «Այդ օրը հեռու է, եւ այն կը դառնայ մեր անկախութեան վերածննդի օրը»:

ԱԼԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԿԸ ՅԵՐՔՈՒԵՆ ԱՅՆ
ՅԵՐԻՐԱՆՔՆԵՐԸ, ՈՐ ՀՆՉԵՑԻՈՒՄ ԵՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵԻՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Հայաստանի ոստիկանապետ Ալիկ Սարգսեանի կարծիքով, կարճ ժամանակ անց կ'աւարտուեն մարտի 1-ի հետ կապուած դատավարութիւնները, եւ դատարանում կը հերքուեն ոստիկանութեանը վերաբերող յերիւրանքները:



Հայաստանի ոստիկանապետ Ալիկ Սարգսեան

«Դէպքեր ունենք, որ հերքենք այն յերիւրանքները, ինչ որ հնչեցնում են ոստիկանութեան հասցէին: Կարծում եմ, որ ոստիկանութիւնը իր մեղքի բաժինը չունի», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցարցոյցում այսօր ասաց Ալիկ Սարգսեանը՝ շարունակելով. - «Հնարաւոր է, որ դանդաղ են աշխատել, հնարաւոր է, որ դրսեւորումը այդ պահին ճիշդ չի եղել, կազմակերպուած չի եղել»:

Մարտի 1-2-ի իրադարձութիւնների հետաքննութեան ընթացքը ոստիկանապետը «նորմալ» է գնահատում. - «Ես նոյնպէս ուսումնասիրել եմ, հետեւել եմ այս ամբողջին, նիւթերին ծանօթացել եմ»:

Հարցին, թէ ինչպէս է գնահատում այն, որ այդ դէպքերի կապակցութեամբ որեւէ ոստիկան չի ձերբակալուել, պատասխանեց, Սարգսեանը հակադրաձեռք. - «Իսկ ինչո՞ւ պէտք է ձերբակալուէր... Դուք ինչո՞ւ էք անպայման համարում, որ օրինականացութիւն է տեղի ունեցել ոստիկանների կողմից»:

Ընդդիմադիր «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի անդամ, Հայաստանի ներքին գործերի նախկին նախարար Սուրէն Աբրահամեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, թէ «իրաւապահները նախընտրում են Մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձութիւնների արդարացման ճանապարհը»:

«Ոստիկանութեան հետ միասին եղել են եւ բանակային ստորաբաժանումներ, եւ ռազմական

ոստիկանութիւն, եւ սափրագլուխների թիկնապահներ... Մի խառնամբօխ է եղել... Երբ ոչ թէ դէպքի օբիեկտիւ ընթացքն են ուզում պատճառաբանել, այլ արդարացնում են ամբողջ իշխանութեան գործողութիւնները, ապա նման հրահանգի պայմաններում... Ես միանգամայն համոզուած եմ, որ նրանք չեն յայտնաբերուել», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Աբրահամեանը:

Ալիկ Սարգսեանը նոյնպէս «ցաւում» է, որ «կոնկրետ դատարանի առաջ սպանութիւն կատարած անձինք այս պահին չեն յայտնուել»:

Սուրէն Աբրահամեանի խօսքով, մինչդեռ՝ «եթէ նրանք օբիեկտիւութեանը կողմ լինէին, կարող էին անձը ձերբակալել, դա նրանց համար մէկից մէկ է».

«Նրա գնահատմամբ, ոստիկանութիւնը քաղաքական պայքարի կողմ է. - «Ոստիկանութեան համար շատ դժուար է լինելու, որովհետեւ Ռոբերտ Բոչարեանը ամբողջ իրաւապահ բոլոր մտցրել է քաղաքական յորձանուտի մէջ եւ դարձրել է քաղաքական պայքարի կողմ»:

ԴԵՄԻՐՃԵԱՆՆ ԳԻՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:
«Մենք կողմնակից ենք առանց նախապայմանների թուրքիայի հետ սահմանի բացմանը, բայց ոչ մեր ազգային արժանապատուութեան հաշուին», - «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը: Նա բացասական չի վերաբերում Գիւլի հրաւերին, բայց անընդունելի է համարում պատմաբանների յանձնաժողովի ստեղծումը, ինչը նաեւ երկիմաստ վիճակի մէջ է դնում այն երկրներին, որոնք ճանաչել են ցեղասպանութիւնը:



ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեան

«Ակնյայտ է, որ թուրքիան ձգտում է ծանրակշիւ դերակատարութիւն ունենալ տարածաշրջանում, սակայն թուրքիայի միջնորդ դառնալու ցանկութիւնը կամ փորձերը Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացում, անընդունելի է. թուրքիան շարունակում է Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորումը կապել Ղարաբաղեան հարցի հետ, այդ իսկ պատճառով չի կարող միջնորդական առաքելութիւն ստանձնել», - ասաց Ստեփան Դեմիրճեանը: Նա գտնում է, որ Միւսկի խմբի ֆորմատը պէտք է պահպանուի:

ՀԺԿ նախագահը մտահոգիչ համարեց Գիւլի անընդհատ արծարծող յայտարարութիւնները՝ տարածքները վերադարձնելու վերաբերեալ. «Կարծես թէ՛ դրանք յստակ չեն էլ հերքուած»:

Դեմիրճեանը նկատում է, որ շատ բարդ իրավիճակ է տարածաշրջանում: «Նկատուած է լուրջ հակադրութիւն ԱՄՆ-ի եւ ՌԴ-ի միջեւ, որը, չուսով եմ, չի վերածուի խորը առճակատման, եւ այդ պարագայում մեր դիւրանագիտութիւնից պահանջուած է առաւելագոյն զգոնութիւն, ճկունութիւն եւ հմտութիւն: Պէտք է վարուի արժանապատիւ, հաւասարակշիւութեամբ արտաքին քաղաքականութիւն: Իսկապէս բարդ իրավիճակ է, լուրջ ջանքեր եւ հմտութիւն է անհրաժեշտ», - ասաց Դեմիրճեանը:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՅԻ ՊԱՇՏՕՆՈՒՄ ՈՒՋՈՒՄ Է ՏԵՍՆԵԼ
«ՕՐԵՆՔԸ ԿՐՈՂ ՍԱՐԴՈՒ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Անահիտ Բախշեանը երկուշաբթի օրը լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց, թէ իրենք ուզում են խորհրդարանի խօսնակի պաշտօնում տեւանել «օրէնքը կրող մարդու»:

«Որ հասարակութիւնը տեսնի, ասի՝ այս մարդը ինչ ասում է, ճիշդ է ասում, որովհետեւ ինքը օրէնքը կրում է իր մէջ», - պարզաբանեց Բախշեանը:

Բախշեանը ասաց, որ ինքը, ցաւօք, նման յատկանիշներ կրող պաշտօնեայի չի ճանաչում: Թէեւ յաւելեց, որ Հովիկ Աբրահամեանի

ինչ վերաբերում է հարաւ - օտական եւ արխագական հանրապետութիւնների անկախութեան ճանաչմանը, ապա Ստեփան Դեմիրճեանը առնուազն այսօր անտրամաբանական է համարում ճանաչել Օսեթիայի, Աբխազիայի անկախութիւնը առանց Ղարաբաղի անկախութիւնը ճանաչելու: Ստեփան Դեմիրճեանն ունի Հայաստանի համար խիստ վտանգաւոր այս պահին ՀՀ դիրքերն ուժեղացնելու բանալի:

«Հայաստանի դիրքերն անհամեմատ ուժեղ կը լինեն տարածաշրջանում, եթէ ներքին վիճակը կայուն լինի, եւ խօսքը չի գնում այն «կայունութեան» մասին, որ այսօր «կայ», - ասաց Ստեփան Դեմիրճեանը: Ըստ նրա, իշխանութիւնը պէտք է քայլեր ձեռնարկի, քաղաքատարկեալներին ազատ արձակի, եւ այդ ժամանակ հնարաւոր կը լինի ընդդիմութեան հետ երկխօսութիւն սկսել երկրի առջեւ ծառայած խնդիրները լուծելու համար: «Թէ ինչքանով մենք կը դիմակայենք այդ մարտահրաւէրներին, կախուած է նրանից, թէ ինչպէս կը լուծենք մեր ներքին հարցերը»:

ընտրութիւնն Ազգային ժողովի նախագահի պաշտօնում «այլեւս անխուսափելի» է:

«Ես անձամբ չեմ շփուել Հովիկ Աբրահամեանի հետ», - ասաց ընդդիմադիր պատգամաւորը՝ շարունակելով. - «Ընդամենը գիտեմ մամուլից, թէ իր մասին ինչքան անօրինական բաներ են գրում, եւ ինքը չի հերքում»:

Հարցին, թէ հնարաւոր համարու՞մ է, որ Հովիկ Աբրահամեանը ապահովի նախկին նախագահ Ռոբերտ Բոչարեանի՝ քաղաքականութիւն վերադարձի խնդիրը, Անահիտ Բախշեանը արձագանքեց. - «Ամբողջ էութեամբս դէմ եմ»:

«ՄՏԱՑԱԾԻՆ ՏԵՐՄԻՆ»

Մարտի 2-ին

Երբեմն ասում են՝ եկէք օրէնսդրօրէն սահմանենք՝ ինչ է նշանակում «քաղաքատարկեալ»: Այդ առաջարկն ինձ տարօրինակ է թւում, որովհետեւ այդ դէպքում մենք «պաշտօնապէս» հնարաւոր

ենք համարում, որ մարդկանց հետապնդեն քաղաքական հայեացքների համար: Տուեալ դէպքում աւելի ճիշդ կը լինի վերացնել երեւոյթը, ոչ թէ օրինականացնել այն:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱԽՕՏ»

ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎԱՍՏԱԿԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԼՈՒՐԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԱՇԽԱԴՐՈՒՄ Է ԿՐՕՆԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ, ԻՍԿ ՕՐԵՆՔԸ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐ Է ՄՏՑՆՈՒՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՑ»:
«Հայաստանի Սահմանադրութիւնը երաշխաւորում է կրօնի ազատութիւնը, այդուամենայնիւ, օրէնքը որոշակի սահմանափակումներ է մտցնում կրօնական փոքրամասնութիւնների ազատութիւնների նկատմամբ», - արձանագրել է աշխարհում կրօնի ազատութեան վերաբերեալ Միացեալ Նահանգների Պետդեպարտամենտի ամենամեայ զեկոյցը՝ միաժամանակ ընդգծելով, որ կառավարութիւնը այդ սահմանափակումները կեանքի կոչելու ուղղութեամբ քայլեր չի կատարել:

Ըստ զեկոյցի, հարորդումներ են եղել հաւատքի կամ կրօնական պատկանելիութեան վրայ հիմնուած վատ վերաբերմունքի եւ խտրակաւնութեան մասին:
Ուսումնասիրելով 2007 թուականի Յուլիսից մինչեւ 2008 թուականի Յունիսը ընկած ժամանակահատուածը՝ Պետդեպարտամենտը, մասնաւորապէս, «Կրօնի ազատութեան սահմանափակումները» բաժնում փաստել է. - «2008 թուականի Մայիս եւ Յունիս ամիսներին իշխանամէտ «Հայոց Աշխարհ» եւ «Գոլոս Արմենիի» թերթերը հակասեմիտական մեղադրանքներ են հրատարակել նախկին նախագահ, ներկայիս ընդդիմութեան առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ: Տեղական դիտորդները հրահրիչ այդ հրատարակումները դիտարկում են որպէս ընդդիմութեան առաջնորդին երկրի դաւաճան ներկայացնելու եւ սեւացնելու փորձ»:

Ձեկոյցը ընդգծում է, որ նոյնաբովանդակ հարորդումներ է հեռարձակել նաեւ Հանրային հեռուստատեսութիւնը, եւ նշում է, որ Միացեալ Նահանգների պաշտօնեաները հրատարակաւ քննադատել են ու յորդորել կառավարութեանը Հ-1-ի եթերում անյապաղ դադարեցնել հակա-

սեմիտական յարձակումները Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ նրա՝ ազգութեամբ հրեայ կնոջ նկատմամբ:

Յղում անելով որոշ դիտորդների՝ ուսումնասիրութիւնը փաստում է, որ Հայաստանում բնակչութեան մեծ մասը բացասական վերաբերմունք ունի կրօնական փոքրամասնութիւնների, յատկապէս «ԵՏՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ» նկատմամբ, քանի որ վերջիններս հրաժարուած են ծառայել բանակում: «Բացի այդ, կայ համատարած, սակայն չհիմնաւորուած համոզմունք, որ «ԵՏՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ» հոգեորոշութեամբ են զբաղուած յատկապէս ընչազուրկների շրջանում», - ասուած է զեկոյցում:

«ԵՏՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ», իրենց հերթին, շարունակում են բողոքել, որ դատաւորները այլընտրանքային գինձառայութիւնից խուսափելու համար սահմանում են օրէնքով նախատեսուած ամենախիստ պատիժը. ըստ ուսումնասիրութեան՝ 2007-ի Յուլիսից մինչեւ 2008-ի Յունիսը այլընտրանքային գինձառայութիւնից խուսափելու համար դատապարտուել է 36 «ԵՏՈՎԱՅԻ ՎԿԱՅ», որոնցից 19-ը ստացել է 30 ամսուայ, 3-ը՝ 36 ամսուայ ազատազրկում, ինչը օրէնքով նախատեսուած առաւելագոյն պատժաչափն է:

Կրօնի ազատութեան մասին 1998 թուականի օրէնքի համաձայն՝ ԱՄՆ-ի Պետդեպարտամենտը ամէն տարի ներկայացնում է զեկոյց աշխարհի երկրներում կրօնի հանդէպ վերաբերմունքի, տարբեր դաւանանքների պատկանող համայնքների միջեւ հաստատուած յարաբերութիւնների եւ կրօնական հանդուրժողականութեան մասին: Այս տարուայ զեկոյցում ընդգրկուած են 2007 թուականի Յուլիսի 1-ից մինչեւ 2008 թուականի Յունիսի 30-ը արձանագրուած զարգացումները:

ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱԶԱԿՑԵՆ

Սերժ Սարգսեանին Սեպտեմբեր 22-ին իր հաւատարմագրերն է յանձնել Հայաստանում Ամերիկայի Միացեալ Նահանգների նորանշանակ արտակարգ եւ լիազօր դեսպան Մարի Եովանովիչը:

Շնորհաւորելով դիւանագէտին՝ պաշտօնը ստանձնելու առթիւ, նախագահ Սարգսեանն ասել է, որ Հայաստանը կարեւորում է Միացեալ Նահանգների հետ բազմաբնոյթ յարաբերութիւնների զարգացումը: Նա երախտագիտութիւն է յայտնել ամերիկեան կառավարութեանն՝ անկախութիւնից ի վեր մեր երկրին ցուցաբերած հետեւողական օժանդակութեան համար: Սերժ Սարգսեանը բարձր է գնահատել նաեւ Միացեալ Նահանգների՝ որպէս համախաղաղ երկրներից մէկի, դերը դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում:

Նորանշանակ դեսպանը Հանրապետութեան նախագահին է փոխանցել ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի շնորհաւորական ուղերձը՝ Հայաստանի անկախութեան սոսի առթիւ:

Ընդգծելով Միացեալ Նահանգները պատրաստակամութիւնն՝ աջակցելու Հայաստանի առաջընթացին դէպի ժողովրդավարութիւն ու շուկայական տնտեսութիւն, դիւանագէտն ասել է, որ կը ձեռնարկի առաւելագոյնը երկկողմ յարաբերութիւնների զարգացման եւ ընդ-




լայնման համար:

Մարի Եովանովիչը Միացեալ Նահանգների կառավարութեան անունից ողջունել է Թուրքիայի նախագահին Հայաստան հրաւիրելու նախագահ Սարգսեանի համարձակ նախաձեռնութիւնը, եւ նշել, որ այն շրջադարձային նշանակութիւն ունի տարածաշրջանի համար եւ կը խթանի խաղաղութեան ու կայունութեան հաստատմանը:

Ջրոյցի ընթացքում կողմերն անդրադարձել են նաեւ հայ-ամերիկեան տնտեսական գործակցութեան խնդիրներին, մտքեր են փոխանակել տարածաշրջանային զարգացումների վերաբերեալ:

Սարգսեանը վստահեցրել է, որ տիկին դեսպանն իր գործունէութեան ընթացքում ամենայն աջակցութիւն կը ստանայ Հայաստանի իշխանութիւնների կողմից:

ՊԱՏԱՐԱԳ ԿԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ



Սեպտեմբեր 20-ին Էջմիածնի Մայր տաճարում, հանդիսապետութեամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի, պատարագ է մատուցուել Վազգէն Առաջին կաթողիկոսի ծննդեան 100-ամեակի առիթով:

Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի փոխանցմամբ, պատարագիչը՝ Եզնիկ Արքեպիսկոպոս Պետրոսեանը, իր քարոզում անդրադարձել է Հայ Առաքելական Եկեղեցու կեանքում Վազգէն Առաջին Վեհափառի բացառիկ դերակատարութեանը, ով խորհրդային անաստուածութեան տարիներին ոչ միայն կարողացաւ դիմադրաւել բոլոր փորձութիւնները եւ դժուարութիւնները, այլեւ շէնացրեց ու պայծառացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, կարողացաւ ջերմ յարաբերութիւններ հաստատել քրիստոնէական միւս եկեղեցիների հետ եւ արժեւորել Հայ Եկեղեցու դերը:

Պատարագից յետոյ Վազգէն Առաջին կաթողիկոսի շիրմի մօտ նախագահութեամբ Գարեգին Երկրորդ Վեհափառի կատարուել է հոգեհանգստեան արարողութիւն:

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ

Շաբաւնակուած էջ 1-էն

բարեկամը»:

«Ամերիկահայութիւնը յուզող հարցերու կողքին, մենք որպէս ամերիկացիներ կը հաւատանք, որ Պարաք Օպամա որպէս յաջորդ նախագահ, համապատասխան կարողութիւնը ունի լաւագոյնս լուծելու ներքին եւ արտաքին մարտահրաւէրները, որոնք կանգնած են երկրին առջեւ եւ պիտի դիմադրաւէ պապազին: Անոր ունեցած զօրաւոր անհատական բարեմասնութիւնները եւ սկզբունքային կեցուածքները պիտի վերականգնեն այն արժէքները որոնք դարձուցած են Ամերիկան տնտեսական գերպետութիւն

եւ առաջնորդող երկիր՝ աշխարհի մէջ», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Յայտարարութիւնը նաեւ կ'անդրադառնայ Օպամայի ծրագիրներուն, որոնք պիտի զանբարձր վարձատրութեամբ գործատեղեր ստեղծելու եւ առողջապահութիւնը մատչելի դարձնելու բոլոր ամերիկացիներուն համար:

Նկատելով որ, կը սպասուի բուն պայքար եւ շատ մօտ ընտրութիւններ, Հայ Ամերիկեան Խորհուրդը կոչ կ'ընէ բոլոր Ամերիկահայերուն, որպէսզի գործնական մասնակցութիւն ունենան յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն եւ Նոյեմբերին իրենց ձայնը տան Օպամա-Պայտըն ցանկին:

ԹՈՒՐԹԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԸ ԼԱԻԱՏԵՍ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐ ԾՐԱԳԻՐՈՎ

Շաբաւնակուած էջ 1-էն

արտգործնախարար Ալի Բաբաջանի եւ Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղար Կոնդոլիզա Ռայսի հանդիպման ժամանակ:

«Թուրքիա շատ կարեւոր ուժ է տարածաշրջանին ներս, եւ կը փորձէ աւելի խաղաղ դարձնել Կովկասը», - ըստ թրքական «Չա-

ման» թերթին, ըսած է Կոնդոլիզա Ռայս:

Ուրբաթ օր, Նիւ Եորքի մէջ կը հանդիպին Հայաստանի, Ատրպէյճանի եւ Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարները. բանակցութիւններու առանցքը կը կազմէ, պաշտօնական աղբիւրներու հարողմամբ, դարաբաղեան խնդրի կարգաւորումն է:

Չեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net www.massisweekly.com

ԱԶԳԱՅԻՆ

ՄԴՅԿ «ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻՆ» ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ



Լրանում է ՄԴՅԿ Սարգիս Տիրունի ուսանողական կազմակերպությունների հիմնադրման երկրորդ տարեդարձը: Երէկ այս առիթով գրուցեցինք ՄԴՅԿ Սարգիս Տիրունի կազմակերպությունների ատենապետ Նարեկ Գալստեանի հետ:

- Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ ստեղծուեց ՄԴՅԿ Սարգիս Տիրունի ուսանողական միությունը:

- Երկու տարի առաջ մի խումբ ուսանողներով հաւաքուեցինք Եռաբլուրում, եւ ազատամարտիկների շիրիմի առջեւ, Հնչակեան մայր դրոշի ներքոյ օժտուցեցինք որպէս ՄԴՅԿ անդամներ: Ես կարծում եմ, որ ազատական կուսակցությունների երիտասարդական կառույցները կայացած էին, փոխարէնը՝ այնքան էլ կայացած չէին ձախ ուղղուածութիւն ունեցող կուսակցութիւնների երիտասարդական կազմակերպութիւնները: Ու այդ պատճառով խնդիր կար համախմբելու ձախ գաղափարախօսութիւն ունեցող երիտասարդներին: Այս երկու տարուայ ընթացքում բաւական ակտիվ գործունէութիւն ենք ծաւալել՝ սկսած քաղաքական ոլորտից, վերջացրած՝ մշակութային ու կրթական ոլորտով: Հանդէս ենք եկել համապատասխան զեկուցներով, յայտարարութիւններով, երթեր ու ցույցեր ենք անցկացրել: Իսկ վերջին շրջանում բաւական ակտիվ դերակատարութիւն ենք ունեցել ընտրութիւնների ժամանակ: Այս երկու տարիների ընթացքում ունեցել ենք նաեւ բացթողումներ: Բայց ինչպէս ասում են՝ չի սխալում նա, ով ոչինչ չի անում: Ինչեւէ, կարծում եմ, որ մեր գործունէութեան գնահատականը հասարակութիւնն ինքը պէտք է տա:

- Յաճախ Գամաթողութիւնը շարժման ձեռքբերումներից են համարում երիտասարդութեան ակտիվ ներգրաւուածութեան համաձայնը:

- Ես կ'երագէի, որ ՀՀ-ում երիտասարդները քաղաքականութեամբ չզբաղուէին ընդհանրապէս, քաղաքականութեամբ հետաքրքրուէր երիտասարդների 3-4 տոկոսը: Աշխարհի իւրաքանչիւր նորմալ երկրում, որտեղ չկան սոցիալական խնդիրներ, որտեղ ընտրութիւններն անցկացւում են նորմալ՝ երիտասարդները քիչ են հետաքրքրուում քաղաքականութեամբ: Մինչդեռ մեզ մօտ հասարակութիւնը բաւական քաղաքականացւած է: Այո, Համաթողութիւնը դական շարժման նուաճումներից մէկն էլ երիտասարդութեան ոտքի կանգնելն էր: Դա փաստ է, ու ոչ ոք չի կարող այն ժխտել: Ընդ որում, կը ցանկանայի շեշտել այն հանգա-

մանքը, որ մեր շարժման մէջ մեծ թիւ են կազմում առաջին հերթին անկուսակցական երիտասարդները, որոնք ուզում են նորմալ ապրել իրենց հայրենիքում:

- Տիգրան Սարգսեանը մի անգամ յայտարարեց, թէ հարկաւոր է, որպէսզի բուհերն ապաքաղաքականացուեն, վերացուեն կուսակցական կազմակերպութիւնները: Ինչպէ՞ս եք վերաբերում նրա ասածներին:

- Նրա յայտարարութիւններն ընդունում եմ ամենայն յարգանքով, բայց չեմ կարծում, որ վարչապետն անձամբ հաւատում է իր ասածներին: Բուհերի 90 տոկոսը կուսակցականացւած, հանրապետականացւած են, իսկ եթէ ուսխորհրդի նախագահը ՀՀԿ-ական չէ, ապա ուսխորհրդում մեծ թիւ են կազմում ՀՀԿ-ականներն ու իշխանական միւս կուսակցութիւնների ներկայացուցիչները: Գաղտնիք չէ, որ վերջին ընտրութիւնների ժամանակ Սերժ Սարգսեանի համար ջանասիրաբար աշխատում էին բուհերի ուսկտորներն՝ իրենց ենթականերով հանդերձ: Աւելին, իրենց ընդդիմադիր հայեացքների համար այսօր ԵՊՀ-ից հեռացւում են դասախօսները: Իհարկէ, ես համաձայն եմ, որ բուհերում ուսանողները չպէտք է զբաղուեն քաղաքականութեամբ, բայց դա պէտք է վերաբերուի բոլորին: Եթէ իրականում Տիգրան Սարգսեանը որոշել է հետամուտ լինել իր յայտարարութիւններին, ապա հարկաւոր հանրապետական դասախօսներ ու ուսուցիչներ այսօր պէտք է հեռացուեն աշխատանքից: Դասերի ժամանակ հիմնական քարոզչութիւն անողները, բուհերի կուսակցականացման մեղաւորները հենց իրենք են՝ իշխանական թեւի ներկայացուցիչները:

- Դուք յայտարարեցիք, թէ երիտասարդութիւնն այսօր բաւական քաղաքականացւած է, բայց միւս կողմից կարծես թէ համարժէք արձագանք չկայ կառավարութեան այն մտադրութեանը, որ բուհերից ցանկանում են վերացնել տարկետման իրաւունքը:

- Երեւոյթը նոր է, ու դրան արձագանքում են դեռեւս լրատուամիջոցների մակարդակով: Ես վստահ եմ, որ առաջիկայում ուսանողների կողմից կը լինեն համապատասխան, համարժէք արձագանքներ: Սա այն հարցն է, որտեղ չկայ Հայ ազգային կոնգրես, չկայ ՀՀԿ, ԲՀԿ եւ այլն: Այստեղ կա ուսանողութիւն ու նրանց հետաքրքրող խնդիրներ: Ու այդ խնդիրները պէտք է համարժէք արձագանք ստանան:

Զրուցեց՝ ԱՐՄԱՆ ԳԱԼՈՒՆԵԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՓԱՌԱՏՕՆԸ

Շաբաւակուած էջ 1-էն

Քրիս Գարսեանեանը եւ երկուսով, հայերէն եւ անգլերէն լեզուներով դեկավարեցին յայտագիրը, ամբողջ օրուայ ընթացքին:

Կլէնտէյլի քաղաքի «High School» երգչախումբը յաջողութեամբ կատարեց ամերիկեան եւ հայկական օրհներգերը: Սքանչելի եւ գնահատելի երեւոյթ էր ոչ-հայ երգչախումբի կողմէ հայկական օրհներգի մատուցումը: Շնորհաւորական խօսքերով ելոյթ ունեցաւ կառավարիչ Առնոլդ Շվարձեակը: Կլէնտէյլի քաղաքապետ John Drayman խօսք արձեւելով շնորհաւորեց ձեռնարկը, որմէ ետք ընթերցուեցան Լոս Անձելըս գաւառի վերակացուներու՝ Մայք Անթոնովիչի գրասենեակէն դրկուած անկախութեան առթիւ յայտարարութիւնը: Ն.Ս.Մ. Միութեան ժրջան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան ներշնչուած



Ստեփան Յովակիմեան, Լիգա Գալուստեան եւ Քրիս Գարսեանեան

նուագախումբի խանդավառ երգերը:

- Լիլիա պարային խումբի, ինչպէս նաեւ Վարդան եւ Սիրանոյշ Գէորգեան պարախումբերու գեղեցիկ կատարումները:

- Երգիչներ՝ Յարութ Յակոբեանի, Սոկրատի, Սամուէլ Սահակեանի, Ռոպէրթ Զիլինկիրեանի, Մակիի եւ վարպետ Լեւոն Գաթրճեանի ելոյթները, որոնք մեծ խանդավառութեամբ ունկնդրուեցան ժողովուրդին կողմէ:

Տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն եւ եղան արժէքաւոր նուէրներ շահողներ:

Բեմը ձայնային մատուցման սարքաւորումը, պատասխանող ցուցադրութիւնը եւ բազմաթիւ տօնահանդիսային մանրամասնութիւնները ամենայն բժախնդրութեամբ ներկայացուեցան, ամբողջ անկախութեան այս 17րդ տարեդարձին տա-



Կլէնտէյլի քաղաքապետ John Drayman

ճառ մը արտասանեց Հայկ Նահապետի կողմէ Բեյլին զգեստնումի 4000 ամեակի մասին, վեր առնելով անկախութեան ձգտումի եւ արժանապատիւ կեանք պարելու արժանիքները բոլորիս համար: Անդրադառնալով «Սանայ Մուր դիւցազնաւէպէն Սանասարի ու Պաղտասարի օրինակին, ան շեշտեց որ եթէ մեր ազգի առաջնորդները, անոնց նման փոխանակ անձնական դրեակներ կառուցելու, հետամուտ ըլլան նախ եւ առաջ ժողովուրդի վիճակի բարելաւման, ապա լաւագոյնս նպատած կ'ըլլան մեր պետականութեան ամրապնդման: Ան ցաւ յայտնեց որ Կիւմրիի երկրաշարժէն 20 տարիներ ետք, շուրջ 6000 հայ ընտանիքներ տակաւին կը մնան զրկուած ապահով երդիքէ մը... Յայտարարի մանրամասնութիւններէն, գնահատանքով կարելի է յիշել:

Կլէնտէյլի Միջ-Համայնքային Սերտակցութեան նպաստող ձենի Քինթերօ Ֆրամէնկօ-սպանական երեք պարերու գեղեցիկ կատարումը: Տիկ. Քինթերօ այս ժանրի պարերու իսկական արուեստագիտուհին կը նկատուի:

- Ալպէր Տէյլիմէնճեան յաջող ասմունքային ելոյթը, նուիրուած օրուան խորհուրդին:

- Արծրունի Պապախանեանի գուռնայի հնչող կատարումը:

- Զուլթակի վրայ, Ալէնի հրամցուցած հիասքանչ մեղեդիները:

- Վահէ Ներսիսեանի եւ իր



Ն.Ս.Մ.Մ.ի ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան

լով հայրենասիրական ճոխ բովանդակութիւն:

Երեկոյեան ժողովուրդը «park»էն տուն դարձաւ հաճելի եւ բարձր տրամադրութիւն մը ապրած ըլլալու գոհունակութեամբ:

Մեծապէս գնահատելի են «ՀԱՆ»ի, «Նոր Սերունդ»ի, Հ.Մ.Մ.ի եւ «Կայծ»ի միաւորները իրենց այս խիստ յաջող եւ գնահատելի կազմակերպչական աշխատանքին համար եւ առիթ տալուն հայրենիքէն հեռու, այս օտար փերու վրայ լիցքաւորուելու հայրենիքի գաղափարով եւ լեցուելու հայրենասիրական անկեղծ զգացումներով:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԵՐԷԿ, ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՐԸ
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԴՐԿ ԱՆԴԱՄ, ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ,
ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՉԵԱՆԻ ՀԵՏ**

- Դուք առողջապահութեան համակարգում առանցքային պաշտոններ եք զբաղեցրել ոչ միայն 2000 թուականից, երբ դարձաք նախարար, այլև՝ դրանից առաջ: Ինչպե՞ս կը գնահատեք առողջապահական համակարգի վիճակը այդ տարիներին:

- Անկեղծ լինեմ: Անկախութեան հենց առաջին իսկ օրերից մեր պետությունը ներքաշուել է պարտադրուած պատերազմի մէջ, որի արդիւնքում մենք ստացանք քայքայուած տնտեսութիւն: Սակայն անգամ այդ պայմաններում, պատերազմական եւ յետպատերազմական տարիներին առողջապահութեան համակարգում առօրեայ խնդիրներ լուծելուց զատ, առաջ էին քաշուած բարեփոխումների յստակ ծրագրեր:

Այսպէս, հենց 1997թ. առաջին եռամսեակում ընդունուեց մինչ օրս միակ համալիր հայեցակարգային փաստաթուղթը: Այդ ժամանակ վարչապետ չունէինք եւ քննարկումներն անցան նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի մօտ: Հայեցակարգում երկրի առողջութեան բարելաւման ուղղուած մանրամասն ծրագրեր ամրագրուած չէին, ուղղութիւններն էին, որոնք քայլ առ քայլ պէտք է իրականացուէին եւ բերէին բնակչութեան առողջութեան, առողջապահութեան համակարգի բարելաւմանը, նաեւ անհատի առողջութեան պահպանման, հանրային առողջութեան խնդիրներին, առողջապահութեան կառավարման, ապակենտրոնացման, ապապետականացման, բժշկական կրթութեան ծրագրերին եւ առողջապահութեան համակարգի ֆինանսաւորման իրականացմանն ու բարելաւմանը: Իրար յաջորդող կառավարութիւնները եւ նախարարները յստակօրէն այդ ծրագիրն իրականացնում էին: Կարելի է խօսել տեմպերի, տուեալ իրավիճակից կախուած քայլերի, մօտեցումների, մեթոդաբանութեան մասին, սակայն, 2003 թուականից սկսած, դժբախտաբար, պետութեան քաղաքականութեան մէջ տեղի ունեցան որոշակի անհեթեթ փոփոխութիւններ: Երբ ի կատար ածուեց առողջապահութեան բնագաւառում ֆինանսաւորող կառուցչի ձեւաւորումը եւ բժշկական օգնութիւն իրականացնող կառուցչների տարանջատումը՝ ստեղծուեց առողջապահութեան պետական գործակալութիւն: Մինչ այդ մենք երկրում ունէինք պետական պատուէր տեղադրող 10 մարզեր, Երեւանը եւ առողջապահութեան նախարարութիւնը՝ 12 պետպատուէր տեղադրող եւ ֆինանսաւորող կառուցչներ: Գործակալութեան ստեղծման արդիւնքում մենք ունեցանք մէկ ֆինանսաւորող կառուցչ, որը

ՀՀ կառավարութեանն աւերթեր էր: 2002 թուականին, կառավարման բարեփոխումների լոյսի ներքոյ, մի շարք աւերթեր կառուցչներ ընդգրկուեցին նախարարութիւնների կառուցուածքում, այդ թւում՝ նաեւ Առողջապահութեան գործակալութիւնը: Այստեղ խեղուեց բժշկական ծառայութիւններ մատուցող եւ ֆինանսաւորող կառուցչների տարանջատման խնդիրը:

Շատ կարեւոր է «Բժշկական օգնութեան եւ սպասարկման մասին» օրէնքը, որով կարգաւորուել էին մեր բնագաւառի կարեւորագոյն հիմնահարցերը: Այն 1996 թուականին ընդունուեց, եւ իրեն բաւականին լաւ արդարացրել է: Սակայն խնդիր էր դրուած ապագայում ունենալ աւելի ընդլայնուած օրէնք, որը կը կոչուէր «Առողջութեան պահպանման» կամ «Առողջապահութեան մասին»: Մշակումները բաւականին երկար իրականացուեցին, օրէնքի նախագիծը 2002 թուականից պատրաստ էր, սակայն 2003-ին մի կողմ դրուեց: 2007-ին մի նոր տարբերակ բերուեց Աժ: Ազգային ժողովում ես եւ իմ գործընկեր պատգամաւորները ներկայացրին քաղաքացիական շարժումներ եւ դիտողութիւններ օրէնքի վերաբերեալ, ինչի արդիւնքում նախագիծը հանուեց քննարկումից, ուղարկուեց վերամշակման եւ մինչ օրս այն չի ընդունուել:

Միւս խնդիրը, որի մասին ցաւով պէտք է նշեմ, մեր երկրում բժշկական ապահովագրութեան հարցն է: Ի դէպ, շատերը սխալուում են՝ համարելով այն միայն ֆինանսաւորման ձեւ: Այո, այն իր մէջ պարունակում է ֆինանսաւորման գաղափարախօսութեան տարրեր՝ որպէս մեթոտ, բայց դա աւելի շատ համերաշխութեան սկզբունքի ներդրման ձեւ է: Սա սոցիալական արդարութեան սկզբունք սերմանելու, ինչպէս նաեւ առողջապահութեան կազմակերպման մոդել է, որը հնարաւորութիւն է տալիս արդարութեան հիմունքներով իրականացնել ֆինանսական միջոցների հաւաքագրում եւ արդարութեան նոյն սկզբունքների հիման վրայ դրանց բաշխում: Այստեղ է, որ մենք բաւական դանդաղ ենք ընթացել: 2000թ. կառավարութիւնում հաստատուեց պարտադիր բժշկական ապահովագրութեան հայեցակարգը: 2002թ. վերջին արդէն պատրաստ էին օրէնքի նախագիծը՝ առողջապահութեան ու ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարութեան տարբերակները: Վերջինս ընդունուելի այլընտրանքային տարբերակ էր: 2003-ին պէտք է Աժ-ում քննարկումները սկսուէին եւ վերջապէս



Արարատ Մկրտչեան

մեր երկրում էլ ներդրուէր գաղափարախօսութիւնը, որ աղքատի համար հարուստն է վճարում, ծերի համար՝ երիտասարդը, գործազուրկի համար՝ աշխատողը, եւ այս մոդելն ընդունելի կը լինէր հասարակութեան բոլոր շերտերի համար: Ի զարմանս ինձ եւ շատ այլ մասնագէտների, այդ երկու օրէնսդրական նախաձեռնութիւններն ինչոր դարակներում փոշոտուում են: Երկնիչ տնտեսական աճի մասին բարձրաձայնող երկիրը, որտեղ իբր մէկ շնչին ընկնող ՀՆԱ-ն հասնում է 4000 դոլարի, ուղղակի իրաւունք չունի նման խուսափողական պահուածք ցուցաբերել բժշկական ապահովագրութեան ներդրման հանդէպ:

- 2002թ. կառավարութիւնը ընդունեց բժշկական ծառայութիւնների մատուցման որակի մասին հայեցակարգը, որն ենթադրում էր համապատասխան յստակ չափորոշիչների մշակում եւ ներդրում: Այդ նախաձեռնութիւնը ի՞նչ փուլում է:

Congressman Barney Frank (D-MA) spoke about the importance of congressional efforts to promote Armenian-American cooperation.

Mark Geragos, a prominent lawyer and an active member of the Armenian-American community, delivered an enthusiastic and energetic keynote address that stressed the historic nature of the pan-Armenian victory in Artsakh.

"[In Artsakh] we have established an independent democratic republic that sits there as a beacon in the middle surrounded by some of the most repressive areas in the world", said Geragos.

Mr. Geragos called for international recognition of the rights and freedoms of Artsakh's people. He also urged substantial increase in U.S. assistance to Nagorno Karabakh and pledged to continue active involvement in developing of Artsakh-Diaspora ties.

Kathryn Porter, the President of the Leadership Council for Human Rights, called "Angel of Artsakh" for visiting and supporting Artsakh during the war, recalled her first trip to the area: "I watched women who had nothing to create a future for their children, for

their families, for all the people of Karabakh. I will not forget what I learned there [in Artsakh], and I pray that you all support them I think we have to have the courage in this country to stand up and be what they need", concluded Mrs. Porter.

Tatoul Markarian, the Armenian Ambassador to the United States, addressed the gathering and reiterated Armenia's position on the Nagorno-Karabakh conflict.

Vardan Barseghian, NKR Permanent Representative to the United States, thanked Artsakh's congressional friends for their ongoing, steadfast support of Artsakh.

A special thank you gift from Artsakh was presented to Representatives Knollenberg and Pallone. Nelly Martirosian, a Columbia University student who spent two months in the Artsakh village of Tsmakahogh implementing a youth development project, brought back a collection of photographs and handmade souvenirs from the children of the village to the American people for their support to Nagorno Karabakh.

The souvenirs included hand-woven mini-carpet, handcrafted wood souvenirs, dry wild flowers, hand-sewn greetings and needle work depicting the U.S. and Artsakh flags. Both co-chairs also received commemorative medals on the 20th Anniversary of the Liberation Movement.

Each member of Congress in attendance received a framed photo of the Tsmakahogh children forming a "Thank You" on the ground.

The event also featured a new documentary on Artsakh produced by Los-Angeles-based journalist Peter Musurlian (www.globalistfilms.com). The film "Artsakh/NKR: the Struggle for Freedom", soon to be available on the Internet, is a powerful combination of interviews, narration and video footage that eloquently presents Artsakh's story.

NKR Representative Barseghian thanked all those involved in the organization of the event. He especially thanked co-chairs Knollenberg and Pallone for taking their support of Artsakh to a new high by extending a full congressional hosting to the event on Artsakh's independence that highlighted shared values of freedom, democracy and determination for progress.

Closing the event, Barseghian congratulated Artsakh's friends around the world on the 20th Anniversary of the Freedom Movement, adding that "surrounded by such formidable friends, Artsakh looks confidently into the future."



Merrill Lynch
INVESTMENT BANKING

JACK KALANJIAN
Professional Financial Advisor

Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
(626) 396-2825 Direct
(626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com

"Helping the Armenian Community Build Wealth"

Armenian Studies Program, University of Michigan Aslanian And Dundar Selected As Post-Doctoral Fellows

ANN ARBOR, MI -- Dr. Sebouh Aslanian and Dr. Fuat Dundar have been selected as Manoogian Simone Foundation Post-doctoral Fellows for the 2008-2009 academic year, announced Prof. Gerard Libaridian, Director of the Armenian Studies Program at the University of Michigan, Ann Arbor.

Dr. Aslanian defended his dissertation, entitled "From the Indian Ocean to the Mediterranean: Circulation and the Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, Isfahan, 1605 to 1747," in the Department of Middle Eastern and Asian Languages and Cultures at Columbia University in 2007. The dissertation reassesses, in part, the usefulness of the "trade diaspora" paradigm for the study of long distance merchant communities. Dr. Aslanian's doctoral thesis, awarded with distinction, was also selected as the best dissertation in the humanities at Columbia University and represented Columbia at a national competition in 2008. During the last academic year he was a Visiting Professor at Whitman College in the state of Washington.

During his tenure, Dr. Aslanian plans to revise and complete a book manuscript for the University of California Press (World History Series) of nine chapters, which is based on his dissertation. The Manoogian Simone fellowship will be crucial in allowing him to elaborate on two themes in his manuscript. The first theme is related to the Early Modern world of "trans-imperial cosmopolitanism." The second theme that he plans to elaborate further is also a paradox involving Julfan cosmopolitanism. "How is it possible," asks Dr. Aslanian, "for a merchant community whose cultural values were so thoroughly cosmopolitan to be among the first communities in the world to embrace what has now

come to be seen as the parochializing logic of the nation-state?"

While at the University of Michigan, Dr. Aslanian will also teach one course per semester and deliver public lectures. During the fall semester, Dr. Aslanian plans to teach a course on "The Indian Ocean in World History." He is the author of a number of articles.

The second Manoogian Simone Foundation for 2008-2009 will be Dr. Fuat Dundar. Originally from Turkey, Dr. Dundar completed his doctoral dissertation in 2007 at the Ecole des Hautes Etudes des Sciences Sociales in Paris. His massive and original work, "The Ethnic Engineering of the Committee of Union and Progress and the Turkification of Anatolia (1913-1918)," has already been published in Turkey (in Turkish); an English edition is being planned for 2009 in the United States.

Dr. Dundar's research while in Ann Arbor will address "Powers and Ethno-Statistics: Population Censuses as an Arena of Ethno Political Conflict from the Ottoman Empire to the Turkish Republic." The basic historical source for this study will be Ottoman and Turkish archival materials and statistical figures so that the instrumentalization of statistical data by the political power in the course of ethnic problems can be revealed. The study will scrutinize the population censuses, which were accomplished beginning from imperial period to the present day.

Dr. Dundar will teach one course during the Winter 09 semester and deliver a number of public lectures.

The positions of Post-doctoral Fellow at the University of Michigan, Ann Arbor, have been made possible by the Manoogian Simone Foundation gift to the University's Armenian Studies Program.

Sarkisian Agrees To Establish Historians Commission

Continued from page 1

tacts between Armenian and Turkish diplomats and there is nothing extraordinary about those meetings," Nalbandian said on Friday, commenting on the latest Turkish press reports. He also did not deny that the two sides are working on a joint declaration that would mark a further step towards the normalization of Turkish-Armenian relations.

The declaration is expected to be high on the agenda of Nalbandian's meeting with Turkey's Foreign Minister Abdullah Gul scheduled for Thursday. The meeting will take place on the sidelines of the UN General Assembly in New York.

Citing a government source in Ankara, the "Turkish Daily News" reported on Monday that the document will underline the two governments' stated commitment to a rapprochement and call for the creation of Turkish-Armenian commissions dealing with economic and other issues of mutual interest. The paper said one of the planned committees would be made

up of historians tasked with studying the "common history" of the two nations and, in particular, the 1915 mass killings of Armenians in Ottoman Turkey.

In an interview with the Turkish daily "Milliyet" published on Sunday, Sarkisian reiterated that he is not against the Turkish proposal in principle, but said the commission of historians should be set up only after Turkey agrees to establish diplomatic relations and open the border with Armenia.

"I have said that before setting up any committee it would be better to establish diplomatic relations and open the border," he said. "And then we can establish different committees and sub-committees on every issue."

Sarkisian also claimed that Armenia does not make any territorial demands from Turkey.

"I am surprised by the territorial demand claim. I do not know but it is a common opinion. But have you ever heard an Armenian official saying, 'We are demanding territory from Turkey.' In no way has such a statement ever been made," he said

Dilijan Series Opens Season With A World Premiere, Quintets By Schnittke And Brahms

LOS ANGELES -- A popular recent addition to the Southland's chamber music scene, the Dilijan Series will launch its Fourth season on October 5th at Zipper Hall. The program includes a World Premiere by the brilliant young Armenian composer Artur Avanesov, Schnittke's haunting Piano Quintet, and Brahms' late masterpiece, the Quintet for clarinet and strings. Michele Zukovsky, Principal Clarinetist of the Los Angeles Philharmonic, returns to perform at Dilijan Series, and is joined by pianist Dzovig Markarian, violinist Henry Gronnier, violists Varty Manouelian and Alison Spieth, cellist Timothy Landauer, and the Series' Artistic Director, violinist Movses Pogossian.

Highlights of the season's six concerts include four world premieres commissioned by the Series, and appearances by distinguished musicians such as violinists Ida Kavafian and Guillaume Sutre, violists Kim Kashkashian and Paul Coletti, cellists Rohan de Saram, Ronald Leonard, Antonio Lysy, singers Vladimir Chernov and Tony Arnold, among others. The November program highlights the collaboration of the distinguished faculties of the Colburn School and UCLA. The light-hearted December

holiday program features world-renowned baritone Vladimir Chernov in traditional and not-so-traditional repertoire, as well as a humorous surprise by P.D.Q. Bach. The January program of string trios by Kurtag, Mansurian, and Mozart, performed by Movses Pogossian, Kim Kashkashian, and Rohan de Saram, is dedicated to Tigran Mansurian's 70th birthday. The action-packed March program features Grammy-nominated soprano Tony Arnold in two world premieres and Shostakovich's A. Blok Cycle, and presents Arnold Schoenberg's early masterpiece Transfigured Night, as well as his Fantasy for violin and piano, written in Los Angeles in 1949. The final concert in May, in commemoration of the Armenian Genocide, features music by Mozart, Komitas, and Ulmann, as well as a version of Bach's Chaconne for violin performed with the Lark Choir.

Founded in 2005 by members of the Glendale, California-based Lark Musical Society, the Dilijan Series is dedicated to promoting Armenian chamber music, as well as showcasing masterpieces of Western classical music. Tickets are available by calling (818) 572-5438, or at the door.

Thousands Attend Armenian Independence Day Festival

Continued from page 1

Ever since its inception, the annual Armenian Independence Day Festival has grown into a wildly popular, multicultural tradition, showcasing Armenian music, art, and cuisine, celebrating a spirit of community and shared history. This year, the tradition continued with thousands attending the event dedicated to the 17th anniversary of Armenia's Independence Day.

The event commenced with the U.S. and Armenian national anthems being sung by the Glendale High School Choir, which consists of both Armenian and non-Armenian students. State and local authorities also paid homage to Armenia's independence, most notably Lisa Kaloustian, representing California Governor Arnold Schwarzenegger, presented the organizers a Proclamation of appreciation, and Glendale City Mayor John Drayman congratulated the attendees on Armenia's Independence and stressed the significant contributions made to the City of Glendale by its Armenian American community.

This year as in previous years booths filled with local Armenian business owners, organizations and artists lined the park in an effort to not only provide fun activities to the attendees but to highlight and support Armenian and international causes. Particularly, the Armenio International booth which featured products from The Republic of Armenia such as MARANI SPIRITS & NIC NAK Clothing, two very unique companies, whose proceeds supported the Autism International Foundation. Other notable organizations included the Christmas Fund for Armenian Orphans and Disabled Children and the Restoration of Children's Homes, and the Armenian Bone Marrow Donor Registry, who recruit and provide matched unrelated donors for bone marrow or stem cell transplantation to all Armenian and non-Armenian patients worldwide suffering from leukemia and other blood related illnesses.

The highlight of the festival was the entertainment provided by various Armenian American singers, musicians, poets and dance troops who performed to the delight of the attendees.

Mark Your Calendar

Sunday, October 5, 2008 2:30 PM – Chookasian Armenian Ensemble "Armenian Music Lecture & Mini-Concert"

Ararat Eskijian Museum 15105 Mission Hills, CA. For res. & info Maggie: (818) 838-4862

Saturday, November 8, 2008: St. Peter Armenian Apostolic Church 50th Anniversary Dinner and Celebration to be held at the Nazarian Center of the AGBU Manoogian Demirdjian School in Canoga Park- 6:00 p.m.

100-ԱՄԵԱԿ

ՈՒԻԼԻՇՍ ՍԱՐՈՅԵԱՆ՝ ՀԱՆՃԱՐԵՂ ԳՐՈՂԸ

«Գրողը իմացական անհիշամանակն ունի է, այնպես ինչպես որ է իւրաքանչիւր մարդ՝ իր հոգիի խորքին մէջ: Ան դժգոհ է ամէն ոքէ եւ ամէն ինչէ: Գրողը միանգամայն ամէնուս լաւագոյն բարեկամն է եւ իսկական թշնամին՝ լաւ եւ մեծ թշնամին: Ան ոչ բազմութիւններու հետ կը քայլէ եւ ոչ ալ կը հաճոյանայ անոնց: Իսկական գրողը ըմբոստ մըն է, որ չի դադարի միշտ ըմբոստ մնալէ»:

ՈՒԻԼԻՇՍ ՍԱՐՈՅԵԱՆ


ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ

Ահաւաստիկ այն գլխաւոր հաւատքի եւ կոչումի հանգանակը որով լաւագոյնս ինքզինք բնորոշեց նախորդ դարու համաշխարհային հռչակի տիրացած հանճարեղ Ուիլիըմ Մարոյեան գրողը: Հաւատարիմ իր այս ուխտին, ան իր գրիչն ու ձայնը ի սպաս դրաւ դաւանած իր մարդկայնութեան, արդարութեան եւ բարութեան հռչակումին եւ իրագործումին ի խնդիր՝ արուեստի եւ գիրգրականութեան խիզախ ոգեկոչումով քննադատեց եւ պիտարակեց ընկերային բոլոր տեսակի շիւ եւ անարդար դրութիւնները, շահագործումները եւ մանաւանդ մարդոց եւ ժողովուրդներու միջեւ կիրարկուող խտրականութիւնները: Մարդու հոգեկան հարստութիւնը գերիվեր դասեց ամէն տեսակի նիւթական կամ շուկայական միտումներէն: Մարդը, խոնարհ ու պարզագոյն մարդը, որպէս բնութեան հրաշագեղ ստեղծագործութիւն, գերիվեր դասեց ամէն նկատումէ: Իր այս մարդերգութիւնը, գրուած իր շքեղ, բազմադէմ եւ բազմասէր գրականութեան ծաւալուն որակով դարձաւ կոթողական իրագործում մը, ձօնուած իր ազգին, իր ապրած երկրին եւ համայն մարդկութեան:

Ան նաեւ հպարտութեամբ յայտարարեց. «Թէեւ անգլերէն լեզուով կը գրեմ, եւ հակառակ այն իրողութեան որ ամերիկացի եմ, ես ինքզինքս կը նկատեմ հայ գրող: Բառերը գորս կը գործածեմ՝ անգլերէն են, շրջապատը որուն մասին կը գրեմ՝ ամերիկեանն է, բայց ոգին որ զիս կը մղէ գրելու՝ հայկականն է: Այս կը նշանակէ թէ ես հայ գրող մըն եմ եւ խորապէս կը սիրեմ հայ գրողներու ընտանիքին մաս կազմելու այս պատիւը»:

Երկու ինքնահաստատումներ՝ գիրար՝ ամբողջացնող: Առաջինին մէջ իր մարդկայնութեան համընդհանուր տեսլականը կը գտնենք, իսկ երկրորդով հաւատարմութիւն՝ իր արմատներուն եւ արեան կանչին: Հոն խտացուած կը գտնենք պանդուխտ հայ մարդուն, մայրենի լեզուէն հարկադրաբար քստորեայլ կարգավիճակին անցած հայ օտարագիր գրողին դառն ճակատագիրը, որ սակայն այլապէս ունեցաւ իր դրական եւ մեծապէս շինիչ անդրադարձը գրողի տեսողաշտի ընդլայնման, համաշխարհային հռչակի տիրացման եւ հայրութեան իւրաքանտուկ դիմագիծին ու ոգիին ծանօթացումի իրականացման վրայ:

Այս յատկանշական տարագումը ընդլայնելով, անպայման պիտի շեշտենք նաեւ Մարոյեանը բնութագրող այլ եզակի, մարդկային եւ գրական տաղանդի յատկութիւններ, առանց որոնց աղօտ պիտի մնար մեծ գրողին հոգեկան եւ իմացական կերպարը եւ անոր լրիւ ընկալումը մեր կողմէ: Այդ յատկանիշներէն հիմնականը, Մարոյեանի գրականութեան բուն ակնադիւրը, իր խոր ու աներկբայեղ իր մարդկայնութեան կողքին դրսեւորուող կենսասիրութիւնն է, կեանքի լաւագոյն օգտագործումը: Ինչպէս հաստատած է



ինք, իր գերագոյն ձգտումը եղած է ըլլալը, ապրիլն ու գոյութիւն ունենալը, անգլերէնով՝ to be-ն, եւ ասիկա Գոյութեանապաշտութեան սարթեան հռչակումէն տասնեակ տարիներ առաջ՝ դաւանուած հայ գրողին կողմէ, այլապէս լաւատեսական փոփոխակով:

Մարոյեանական ուրիշ մտածողութեան ձեւակերպում մըն ալ կը մատնէ անոր բացարձակ անկախութիւնն ու ազատատենչ ոգին: Ան այսպէս կը բնորոշէ իր աշխարհայեացքը. «Ես պատմութեամբ գրող եմ, եւ ունիմ միակ պատմութիւն մը - պիտի գրէր ան, - կ'ուզեմ պատմել այդ պարզ պատմութիւնը իմ ուրոյն ձեւով, մոռնալով պերճախօսութեան օրէնքներն ու շարադրական հնարքները: Ըսելիք ունիմ եւ չեմ ուզեր պատմել Պալաքի մը լեզուաոճով: Ես արուեստագէտ չեմ: Իրապէս չեմ հաւատար քաղաքակրթութեան: Բնաւ խանդավառ չեմ յառաջդիմութեամբ: Երբ մեծ կամուրջ մը կը կառուցուի ես չեմ ծափահարեր, եւ երբ օղանաւներ Ատլանտեանը կը կտրեն, ես չեմ ըսեր «Ինչ հրաշալի դար է այս»: Չեմ հետաքրքրուած ազգերու ճակատագրով, եւ Պատմութիւնը կը ձանձրացնէ զիս: Ի՞նչ կը հասկնան պատմութիւն ըսելով, անոնք որոնք գայն կը գրեն եւ անոր կը հաւատան: Ինչպէս պատահեցաւ որ մարդը, այդ խոնարհ եւ սիրելի արարածը շահագործուեցաւ այդպիսի ճիւղաղային փաստաթուղթերու ի խնդիր: Ինչպէս պատահեցաւ որ անոր առանձնութիւնը քանդուեցաւ, եւ իր աստուածայնութիւնը փոխարկերպուեցաւ սպանութեան եւ քանդումի վարչելի խոտլարարութեամբ: Չեմ հաւատար նաեւ վաճառականութեան: Իսկ բոլոր մեքենաները կը նկատեմ հնոտիք, ինչպիսին են հաշուիչ մեքենաները, ինքնաշարժները, երկաթուղային շարժիչները, օղանաւն ու այլ, նոյնիսկ հեծանիւր: Միայն մարդն է զիս հետաքրքրողը: Կը սիրեմ կեանքը եւ մահուան առջեւ խոնարհ եմ: Մահէն չեմ վախնար, որովհետեւ ան պարզապէս ֆիզիքական է: Կ'ատեմ սակայն բռնութիւնը եւ գայն գործադրողները: Ապրող մարդու մը ճկոյտուն արիւնի իսկ կը նկատեմ աւելի աղիտաւոր եւ սարսափելի քան թէ բնական մահը: Իսկ երբ պատերազմներու ընթացքին, մարդոց բազմու-

թիւններն են որ կը սպաննուին, զիս խենթեցնելու չափ կը ցաւցնեն: Կատարութեամբ կ'անդամարտուիմ: Իմ միակ գործիքս լեզունն է, եւ երբ գիտեմ թէ ան աւելի գորաւոր է քան գէնքերը, յուսահատութեան կը մատնուիմ, որովհետեւ չեմ կրնար ձեռքի մէկ հարուածով բնաջնջել քանդումի ըմբռնումը գոր քարոզչութեամբ արթնացած են մարդուն մէջ: Ես ալ թէեւ քարոզող եմ, բայց այս պատմութեամբ կը փորձեմ մարդը վերադարձնել իր բնական արժանապատուութեան եւ ազնուութեան: Կ'ուզեմ վերակերտել մարդը իր ինքնուրոյնութեան մէջ: Կ'ուզեմ ամբողջն անջատելով զինք վերահաստատել իր մարմինին եւ միտքին մէջ: Կ'ուզեմ ազատել զինք պատմութեան մղձաւանջէն եւ վերադարձնել զինք իր հոգիի խաղաղ երազներուն, կ'ուզեմ որ ան ըլլայ ինքզինք»:

Անիշխանականութեան իսկական յայտարարութիւն թուացող այս հաստատումը սակայն պէտք է բնաւ շփոթել յայտնի անիշխանականներու պայթուցիկ յայտարարութիւններուն հետ, որոնք կը դաւանին եւ կը ձգտին գէնքի ու սպանդի միջոցով իրագործել իրենց ծրագիրը, մինչ Մարոյեան կ'ատէ բռնութիւնը եւ գայն գործադրողները: Իր միակ գէնքը լեզունն է, գրիչը, իր արուեստն ու անսպառ տաղանդը, գորս անսակարկ ի սպաս դրաւ ան ամբողջ աշխարհի գրկուած ու խոնարհ մարդոց երջանկութեան ի խնդիր: Ան կեանքին ու մարդոց մօտեցաւ բանաստեղծի վճիտ նայուածքով եւ բանաստեղծութիւն ներարկեց անոնցմէ ներս:

Մարոյեան նաեւ հանդիսացաւ մեծ նորարար մը ամերիկեան եւ համաշխարհային գրականութեան մէջ, երեսունական թուականներու տնտեսական Մեծ Տագնապին հետեւանքով, պրկուած-ձգտուած, յոռետես եւ ճնշիչ մթնոլորտին դէմ պայծառ եւ անպիլիկ գրականութիւն մը ստեղծեց, կեանքի բոլորն ու համը գովերգեց, ժողովուրդներու միջեւ իրար հասկացողութիւնն ու խաղաղութիւնը ջատագովեց եւ մարդոց ալ եղբայրակցութեան սքանչելի դրուագներ ստեղծագործեց:

Ան գրեց բոլորովին նոր ոճով, նոր հայեցակէտով եւ նոր մօտեցումով: Երիտասարդութիւն, թարմութիւն եւ քնքշանք բերաւ ան, նիւթապաշտ ընչազաղձութեան դէմ արժեւորեց հոգեկան հարստութիւնը, նենգութեան եւ բռնութեան դէմ ձօնբերեց մանուկներու անմեղութիւնն ու պարզ անմիջականութիւնը, ու աշխարհի միակ օրինաչափութիւնը հանդիսացող անօրինաչափութեան դէմ շիկացող իր ծիծաղն ու գուրաթխոտութիւնը:

Այս է հիմնական հանրագումարը Մարոյեանի մեզի ձգած աւանդին, որմէ պիտի թուեմ ընտրանի խորձ մը միայն. «Խիզակ Երիտասարդը Թուշոյ ձօճափայտին Վրայ», «Անունս Արամ է», «Մարդկային Կատակերգութիւն», «Սիրտս Լեռներում է», «Ձեր Կեանքի Օրերը», «Ուեզլի ձէքսընի Արկածները», «Ռոք Վակրամ», «Սիրոյ Հին եւ Անուշ Երգը» խորագիրները կրող երկերը՝ որոնք սակայն կը ներկայացնեն հիմնականը իր աւանդին եւ ո'չ ամբողջութիւնը: Իր արդէն տպագրուած ութսունի մօտ հատորներու կողքին կան տակաւին մեզի անյայտ մնացած մօտ երեք հարիւր ձեռագիր հատորներ - որոնցմէ երկու հարիւրը թատրերգութիւններ, - կը մնան անտիպ, կարծես որպէս պատանդ՝ «Trustees of Leeland Stanford Junior University»-ի դիւանադարակներուն մէջ պահ դրուած՝ սխալ

բանաձեւուած կտակի մը թիւը գործադրութեան կամ ժառանգորդներուն ընչազաղձութեան արդիւնք՝ չենք գիտեր: Ամենայն դէպս, նախանձի, ազգային խտրականութեան անհանդուրժող եւ ատելավառ ոմանց չար ոգին, իր դերը գգալի կը դարձնէ այս «լուսթեան դաւադրութեան» արշաւին մէջ, ինչպէս նաեւ՝ հրատարակչական դրութեան մէջ մենատիրութիւն հաստատած ծանօթ հատուածի մը ոտնձգութիւնները:

«Խիզախ Երիտասարդը Թուշոյ ձօճափայտին Վրայ» պատմուածքներու առաջին հատորով իսկ Սարոյեան գրաւեց գրական առաջնակարգ դիրք՝ 1934-ին: Հոն տեղադրուած պատմուածքները առ երեւոյթ չունէին ծրագրուած, զարգացող նիւթ, հանգոյցներ կամ զգայացունց դէպքերու շարադրանք: Նոր տեսակի պատմուածքներ էին, ընդունուած օրէնքներու անտեսումով մատուցուած: Հակառակ այդ զանցառութեան, ընթերցողներու վիթխարի բանակ մը յափշտակութեամբ կարգաց հաւաքածոն, ըմբռնելով Մարոյեանի հիւթեղ, գուրաթխոտութեամբ վառ լեզուն եւ քնարական շունչը: Կոճկուած, կոկուած ձեւաւորումներէ հեռու, հեզասահ անմիջականութեամբ, ջերմութեամբ կենդանացած ոճով, ան կը փորձէր կեանքի սովորական երեւոյթներ ու պատկերներ պարզել, խոնարհագոյն մարդոց զգացական աշխարհին բացառապատմով: Անտուաղութեան դատապարտուած սկսնակ գրողին, անգործ բանուորին, անհետանալու վտանգին ենթարկուած ասորի սպիրիտին, իր լանտաղի սպասեակին, ճափոնցի ընչազուրկին, փոլոնացի երիտասարդ գաղթականին ապրումներուն, մտորումներուն ընդմէջէն կը պարզուէր ուրոյն աշխարհ մը մարդոց, որոնք արմատախիլ իրենց հողերէն ու տուներէն, կը փորձէին ստեղծել համեստ անկիւն մը այս արեւին տակ, մարդավայել կեցութեան նուազագոյն պայմաններու ակնկալութեամբ: Մարոյեանի մարդերգութեան դաւանանքը հոն շեշտակիօրէն կը հակէր դէպի անհաստապաշտութիւն՝ դրական այն իմաստով որ կարեւորը անհատն էր եւ ոչ թէ ամբոխը կամ բազմութիւնը:

Եթէ պատմուածքներու այս շարքը հայ գաղթական մարդու տեսանկիւնէն դիտուած, ազգութիւններու համադրում մը կը ներկայացնէր, յաջորդ պատմուածքներու հատորը, խորագիրով, միջավայրով, մթնոլորտով եւ տիպարներով ամբողջութեամբ հայկականութեամբ պիտի բնորոշուէր: «Անունս Արամ է»-ն ողջ աշխարհով մէկ պիտի հռչակէր Մարոյեան մարդուն ու գրողին հայկական ուրոյն դիմագիծն ու ոգին մանաւանդ, վճիտ ու մանաւանդ պարզունակ մարդկայնութեան պարունակին տակ պեղելով մարդկային հոգիին ամենախոր զգացականութիւնը, թուիչքերն ու անկումները: Մանկութեան եւ պատանութեան իր անձնական յուշերուն եւ փորձառութիւններուն վրայ ատաղձուած, պարզ ու միամիտ բայց երազով եւ կեանքը ճանչնալու եւ ապրելու անզուսպ տենչով բռնկած, Ֆրէյձօ ապաստանած հայ գաղթականի զաւակ պատանի Արամին «սիրագործութիւն»ներն ու «արկած»ները խորիսիւր կը կազմեն պատմուածքներու այս շարքին: Արամի կողքին կը տողանցեն Գարօղլանեան տարագիր տոհմին մնացորդաց տիպարները, մէկը միւսին ինքնատիպ եւ գունազեղ գիծերով դրոշմուած, իրենց

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ «Հ.Մ.Մ.-Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ» ԳԻՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Ծ.Խ. Ուրբաթ, 12 Սեպտեմբեր 2008, երեկոյեան ժամը 8:00ին ԿլԷմտէյլի հանրային գրադարանին մէջ, տեղի ունեցաւ քննարկում-գիտնածօն ձեռնարկ, նուիրուած Հ.Մ.Մ.-ի 85-ամեակին առթիւ հրատարակուած եւ Տիգրան Սարաֆեանի հեղինակութեամբ գրքին նուիրուած ձեռնարկը:

Սոյն յօդուածը Տօքթ. Յարութիւն Սաղոեանի ելոյթին համառօտ ներկայացումն է:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

«Հ.Մ.Մ.-ի Պատմութեան Հետքերով» գրքին ամբողջ պատգամը կարելի է գտնել հետեւեալ մէկ նախադասութեան մէջ.

«Յիշողութիւնը կը հարստացնէ մեր ներկան եւ մղիչ ոյժ կը դառնայ գալիքին համար»:

Գործադրելով սոյն արտայայտութեան ետին գտնուող ճշմարտութիւնը, ընկ. Տիգրան Սարաֆեան յաջողած է պատրաստել այս յուշագրութիւնը, գոր ինք կը ներկայացնէ իբրեւ «հում նիւթ» կամ «ատաղձ» վաղուան աւելի հմուտ եւ ձեռնհաս պատմագրին Հ.Մ.Մ.-ի ամբողջական մէկ գրքի պատրաստութեան: Հեղինակը այս միտքը արտայայտած է գրքին մէջ բազմաթիւ առիթներով: Ըստ իս, եւ ի պատիւ հեղինակին, 412 էջեր պարունակող այս աշխատասիրութիւնը անտարակոյս կը հանդիսանայ կոթողային աշխատանք մը, եթէ ոչ ամբողջական, գէթ համապարփակ տարողութեամբ հրատարակութիւն մը, Հ.Մ.Մ.-ի ամբողջ 85 տարիներու գոյութեան:

ԸՆԿ. ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

Ծնած է Իսկէնտէրուսի Սովուք Օլուք գիւղը, Պէյլանի մօտերը: Ծննդեան թուականն է Մայիս 15, 1928ը: Չնայած իր 80-ի համադր տարիքին Սարաֆեան օժտուած է երիտասարդական տրամադրութեամբ եւ կորովով: Իր ծննդավայրէն կը փոխադրուի Հալէպ եւ կը յաճախէ Հալէպի Կիլիկեան վարժարանը, եւ անկէ կը սկսի իր ազգային, մարզական, սկստական եւ քաղաքական ընդարձակ գործունէութիւնը - Սուրիա, Լիբանան, Եւրոպա, Ամերիկա եւ Հայաստան, մէկ խօսքով հոն ուր հայութիւն կայ եւ Հ.Մ.Մ. կայ: Հոն ուր չկայ, ինք կ'օգնէ հիմնելու: Եւ ահա այս յուշագրութիւն-պատմագիրը, յատկանշուած ճշգրտութեամբ, անկողմնակալութեամբ, ուշադրութեամբ, մանաւանդ սիրով, յարգանքով եւ անկեղծ գնահատանքի խօսքերով: Նկարագրուած դէպքերուն մեծ մասին մասնակից է ինք, եւ ոչ թէ դիտող-պատմող: 1960-1981 եղած է Պէյրութի Հ.Մ.Մ.-ի վարչութեան ատենապետ, իսկ 1981-2002 եղած է Հ.Մ.Մ.-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ: Եթէ յանցանք մը պիտի տեսնեմ գրքին մէջ, ան ալ իր գգալուն եւ իտէյալացնող մօտեցումն է Հ.Մ.Մ.-ի արդէն իսկ պատմութեան անցած սերունդին, որուն հասցէին ան յաճախ կ'ըսէ.

«Անոնք տարբեր էին: Նորերը անոնց պէս չեն»: Քիչ մը անցեալապաշտութիւն կայ իր մօտ, գոր արդարանալի կը գտնեմ, քանի որ ինքն ալ մեծ մասամբ մասնակից եղած է անոնց: Սակայն ի պատիւ իրեն, ինք չի մնար անցեալի մէջ, այլ մտահոգ է ներկայով եւ մանաւանդ ապագայով:

ԳՐՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ

Ըստ հեղինակին, երեք հոգիներու խնդրանքին եւ պահանջքին արդիւնք է սոյն հատորը, գոր ինք

յուշագրութիւն կը կոչէ:

Ժիրայր Նայիրի, ծանօթ անձնաւորութիւն, մտաւորական, քաղաքական տեսաբան, ղեկավար եւ վաղեմի, հաւատաւոր միութենական: Ժ. Նայիրի գրած է նաեւ գրքին «Ներածական»ը, իրեն յատուկ պերճախօսութեամբ:

Տօքթ. Համբարձում Սարաֆեան, հեղինակին գաւակը, ինքն ալ ճանչցուած անձնաւորութիւն եւ ղեկավար իր պատկանած կազմակերպութեան եւ լայն ազգային շրջանակներուն ծանօթ:

Ալպէր Մինասեան, երբեմնի «Արարատ Մարզականի» խմբագիր-աշխատակից:

Տիգրան Սարաֆեան քանի քանի տեղ գրքին մէջ կը շեշտէ թէ իր ըրածը պարզապէս նախապատրաստութիւն մըն է, եւ կ'աւելցնէ «եթէ այս գիրքը հում նիւթ կամ ատաղձ ծառայէ վաղուան աւելի հմուտ եւ ձեռնհաս պատմագրին, շատ ուրախ եւ բաւարարուած պիտի ըլլամ»: Ի պատիւ իրեն գրքին 412 էջերը կարդալէ ետք, անվարան կը վկայեմ որ ինք իրապէս կոթողային աշխատանք տարած է, որուն համար արժանի է գնահատանքի եւ նորհաւորութեան: Ինք նաեւ օժտուած է պատմելու եւ ներկայացնելու յատուկ շնորհով մը, մանաւանդ քաղաքացիական պատերազմի ժամանակէն սկսած: Ընկ. Սարաֆեան Հ.Մ.Մ.-ի պատմութիւնը կը հասցնէ մինչեւ 1959 թուականը, Հալէպի մէջ հիմնադրութենէն, 1925-էն ետք: Իրմէ առաջ, գրեթէ յաջող փորձ մը պիտի ըլլար մէկ ուրիշ փորձ մը, 1952 թուականին, երբ երեք հոգիներէ բաղկացած յանձնախումբ մը - Յարութիւն Չէքչենեան, Կարապետ Հաննէսեան, եւ Գեորգ Տարօնի, որոշ աշխատանք տարած էին, եւ սակայն «Շիրակ» տպարանի մէջ պատահած հրդեհ մը մասամբ փճացուցած էր հաւաքուած արխիւը: Ուրեմն, ընկ. Տիգրան Սարաֆեան սոյն գիրքը պատրաստելու լրիւ տուեալները ունէր, ըլլալով հիմնադիրներուն անմիջական յաջորդ սերունդի մէկ անդամը, սկստու, սկստապետ, Հ.Մ.Մ.-ի պատասխանատու մարմիններու անդամ, անշուշտ թէ ի վիճակի պիտի ըլլար նման յուշագրութիւն մը պատրաստելու: Պէտք է խոստովանիլ նաեւ որ գիրքը ճոխ է առատ լուսանկարներով, որոնք գեղեցկօրէն ներկայացուած են, եւ պարզ հայեացք մը անոնց վրայ, բացի պատմական վաւերական արժանիքէ, հպարտութեան գագուցով մը կ'ողողէ դիտողին հոգին:

Գրքին սկզբնաւորութեան, կայ նաեւ հարցազրոյց մը հեղինակին հետ, որուն մէջ հետաքրքրական մանրամասնութեանց կողքին, ընկ. Սարաֆեան կ'ըսէ.

«Հիմա որ խերով-բարով Ա. հատորը լոյս տեսած է, կը խոստանամ Բ. հատորը պատրաստել 1960-1981, եւ ապա 2002 թուականը»: Ընդհանուրին փափաքը այն է որ ինք արդէն իսկ կանչուած է գործի սկսելու եւ մօտ ատենէն Բ. հատորը

Շար.ք էջ 16

«Հ.Մ.Մ.-Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ» ՀԵՂԻՆԱԿ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆ

ԱՍՏՏՈՒՐ ԿԻԻՋԵԼԵԱՆ ԼՌՆՏՈՒ

Այն հարցումին, թէ ե՞րբ եւ ինչո՞ւ է ունեցած մտածումն ու մտադրութիւնը պատմագրելու Հայ Մարմնամարզական Միութեան (Հ.Մ.Մ.) ընդհանուր գործունէութիւնը, Տիգրան Սարաֆեան պատասխանած է.

«Ոեւէ Հ.Մ.Մ.ական, ինչ հանգամանք ալ ունեցած ըլլայ ան, անպայման պիտի ցանկայ ունենալ իր միութեան պատմագիրը: Բայց նախ ընեմ ճշդում մը, ես, երբեք ալ, Հ.Մ.Մ.-ի պատմութիւնը գրելու մտադրութեամբ չեմ սկսած յուշագրութիւնս: Եթէ գրառումներս «հում նիւթ» կամ «ատաղձ» ծառայեն վաղուան աւելի հմուտ եւ ձեռնհաս պատմագրին, շատ ուրախ եւ բաւարարուած պիտի ըլլամ»:

Անմիջապէս շեշտենք որ 413 էջերու վրայ սփռուած այս աշխատասիրութիւնը ունի բոլոր տուեալները դառնալու «հում նիւթ», (ինչպէս կը նախատեսէ հեղինակը) եւ դառնալու արժէքաւոր սկզբնադրելու բոլոր անոնց համար, որոնք հետագային պիտի գրեն սփիւռքահայ համայնքներու արգանդէն ծնած ու անոնց կաթով սնած միութիւններու՝ յատկապէս մարզական կազմակերպութիւններու ամբողջական պատմութիւնը:

«Նայիրի» թերթի խմբագիր, ընկ. Ժիրայր Նայիրին:

«Պատմութեան Հետքերով»-ը չի սահմանափակուիր լոկ մարզական դէպքերու եւ դէմքերու նկարագրութեամբ, այլ կու տայ նաեւ Հ.Մ.Մ.-ի հովանաւորութեան ներքեւ գործող մշակութային, գեղարուեստական եւ ընկերային կազմակերպութիւններու իրագործումներու վաթսուամեայ պատկերը (1921-1981):

Գիրքը առաջին հերթին կը ներկայացնէ Հ.Մ.Մ.-ի անցած ճամբան, ձեռք բերած յաջողութիւններն ու արձանագրած յաղթանակները մարզական կեանքէն ներս: Գիրքը միաժամանակ կ'անդրադառնայ Հ.Մ.Մ.-ի խաղցած կենսական դերին, նոր սերունդի մտաբարոյական դաստիարակութեան, արուեստի ու մշակոյթի տարբեր բնագաւառներուն մէջ ունեցած գործունէութեան եւ ձեռք բերած յաջողութիւններուն:

Կարգալով «Պատմութեան Հետքերով»-ը ընթերցողը հարցման նշան չի դնէր այն անվիճելի իրողութեան վրայ, ըստ որում Հ.Մ.Մ.ը եղած է դարբնոց մը, ուր հայրենասիրութեամբ կոբուած է հայ պատանիին ու երիտասարդին սիրտը, միտքն ու հոգին: Միութեան առաջին ղեկավարները, մեծաւ մասամբ եղեռնէն փրկուած բեկորներ, ի սկզբանէ ըմբռնած են ազգանուէր ու հայրենասէր նոր



սերունդ մը պատրաստելու հրամակայական պահանջքը եւ ըստ այնմ լծուած են ծրագրեալ աշխատանքի: Անոնք միաժամանակ գիտակցած են որ սփորթը, իր ձգողական ուժով, պատանիներն ու երիտասարդները համախմբելու լաւագոյն միջոցներէն մէկն է:

Միջանկեալ դիտել տանք որ Տիգրան Սարաֆեանի «Պատմութեան Հետքերով»-ը յուշերու արահետներով մեզ տարաւ քառասնական թուականները, երբ Սանճազի պարպումին որպէս հետեւանք, հաստատուած էինք «Երագային Հալէպ» (ինչպէս պիտի ըսէր Ա. Մառուկեան): Տիգրանին ընտանիքը կ'ապրէր նոյն բակը, ճիտետիէ կոչուած թաղին մէջ, ուր կ'ապրէինք նաեւ մենք, հինգ եղբայր, հայր ու մայր... մէկ սենեակի մէջ: Տիգրանն ու ես կը յաճախէինք Հալէպի Կիլիկեան վարժարանը: Ան նախակրթարանի ուսանող էր, իսկ ես մանկապարտէզի: Իմ մանկութիւնս ու պատանութիւնս անցուցած եմ Տ. Սարաֆեանի նկարագրած Հալէպի հայաշունչ միջնորդին մէջ: Արդարեւ, Կիլիկեան վարժարանն ալ, Հ.Մ.Մ.-ի պէս, նկատուած էր հայրենասիրութեան մեծ դարբնոց մը, ուր մեր ուսուցիչները, գլխաւորութեամբ տնօրէն Պրն. Երուանդ Պապայեանին, այք ու բենին հետ մեզի ջամբեցին հայրենասիրութեան ոգի: Սարաֆեանի գիրքին մէջ չիշուած Հ.Մ.Մ.ականներուն՝ ներառեալ ղեկավարութեան մեծամասնութեան անձնապէս ծանօթ էի:

Գրքին մէջ Սարաֆեան հանգամանօրէն անդրադարձած է նաեւ Հ.Մ.Մ.-ի արձանագրած յաջողութիւններուն, ֆութպոլէն բացի, սփորթի տարբեր ձեւերու մէջ, ինչպէս պասքեթպոլ, վոլեյպոլ, եւայլն:

Մարզական խաղերու վաթսու տարուան պատկերին գուգահեռ՝ Տիգրան Սարաֆեան անդրա-

Շար.ք էջ 17

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՉ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

Ս. ՅԱԿՈԲ ՅԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ 66-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՅԱՆԴԵՍ

Թերեւս շատերու համար անծանօթ անուն մըն է Ս. Յակոբ Հայց. Առքլ. Եկեղեցին, որ կը գտնուի Լոս Անճելըսի արեւմուտքը, իր միջազգային օդակայանէն քանի մը մղոններ դէպի արեւելք, Սլասթըն եւ Լա թիերա փողոցներու անկիւնը:

Կրկնութեան գնով կ'ուզենք չիշեցնել նաեւ թէ հայկական եկեղեցի մը ունենալու գաղափարի սաղմաւորումը սկսած էր 1941-էն ի վեր եւ ապա տարիներ վերջ յատկապէս 19 Մայիս 1968-ին Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը, նախագահութեամբ տեղի ունեցած է Ս. Յակոբ եկեղեցւոյ հիմնաքարի արարողութիւնը: Աւելին՝ եկեղեցւոյ օժուածը կատարուած է 21 Մարտ, 1971-ին, իսկ առաջին հոգեւոր հովիւը եղածը է Եղիշէ քհնյ. Մալչինեանը:

Մեր ժողովուրդի բարի սովորութեան եւ ազգային նկարագրէն մեկնած անմիջապէս եկեղեցւոյ շուրջ կազմուած է համալիր մը, որ իր մէջ պարփակած է աւելի քան 350 հոգիներ «Ճան Կոկեան» սրահը, «Լեւոն Գասապեան» դպրոցը, «Հայկանուշ Տիւրկէրեան» 100 հոգիներ սրահը եւ «Տիգրանուհի Մելքեան» գրադարանը:

Աւելցնենք նաեւ, որ 1977-էն ի վեր, եկեղեցւոյ հոգեւոր հովիւն է Արշակ քհնյ. Խաչատուրեան:

Այս բոլոր տուեալները կը ներկայացնենք աւելի մօտէն ծանօթացնելու Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի ամէնէն հին մեր եկեղեցին, որուն հիմնադրութեան 66-րդ ամեակը գուզադիպեցաւ Թեմի հիմնադրութեան 80-ամեակին եւ որ փառաշուք եւ համաժողովրդային կերպով նշուեցաւ անցեալ տարի:

Պէտք է ըսել նաեւ, որ եկեղեցւոյ տաղաւարներու եւ զանազան հոգեւոր հանդիսութիւններու կողքին գեղեցիկ սովորութիւն դարձած է, որ իրարայջող Միսիկան Խորհուրդներ տարեկան իրենց ծրագրէն ներս, անպայմանօրէն ներառեն եկեղեցւոյ համալիրէն ներս տարեկան դաշտահանդէսի բաժինը, որովհետեւ վերջին հաշուով, այս մէկը կը միտի եկեղեցւոյ բարեպաշտ ժողովուրդին ու անդամները ըման օր մը մէկ յարկի տակ համախմբել, մէկտեղել եւ միասնաբար հաճելի պահեր ու ժամեր անցնել:

Ճիշդ ասկէ թելադրուած, նախորդ տարիներու նման, այս տարի

եւս ծրագրեց եւ ապա շնորհիւ իր յատուկ յանձնախումբին՝ կազմակերպեց եկեղեցւոյ տարեկան դաշտագնացութիւնը՝ իր շրջաբակէն ներս:

Այսպէս, Կիրակի Սեպտեմբեր 17-ին Ս. Ժատարագէն ետք մինչեւ երեկոյեան ժամը 8:00ը, եկեղեցւոյ ընդարձակ շրջաբակին մէջ տեղի ունեցաւ հրապարակային այս դաշտագնացութիւնը, ներկայութեամբ աւելի քան 350 հայրերիներու:

Պէտք է ըսել, որ Միսիկան Խորհուրդի այս տարուայ նման ձեռնարկ մը կազմակերպելու գեղեցիկ գաղափարը մեծապէս գնահատուեցաւ բոլոր ներկայներէն:

Ու հակառակ Քալիֆորնիոյ Սեպտեմբերեան տակ եղանակին, այս տարի եւս մեծեր եւ փոքրեր իրենց զաւակներով, թոռներով, բարեկամներով եւ դրացիներով, ժամանակէն առաջ խճողած էին եկեղեցին, միասնաբար անցնելու հաճելի եւ ուրախ օր մը:

Միւս կողմէ, Միսիկան Խորհուրդի ատենապետ Վիգէն Գուլումեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արշակ քհնյ. Խաչատուրեան ոչ մէկ ճիգ խնայած էին հաճելի եւ ուրախ մթնոլորտ մը ստեղծելու համար:

Այլ խօսքով, աւելի քան 8 ժամերու ընթացքին, Ս. Յակոբ եկեղեցւոյ բակը վերածուած էր հայկական գեղեցիկ կեդրոնի մը, ուր հայկական երգ ու երաժշտութիւն, ուտելիքներ եւ խաղեր աչքառու դարձած էին: Ամէն տարուայ նման ծանօթ արուեստագէտ Ճան Պիլէյզիկեան եւ իր նուագախումբը հայկական պարեղանակներով եւ երաժշտութեամբ խանդավառեց մթնոլորտը:

Անկասկած, որ դաշտագնացութիւնը նոր ջերմութիւն բերաւ ձեռնարկին ներկայ եղող ժողովուրդին, եկեղեցւոյ անդամներուն եւ հայ կամ օտար հիւրերուն միջեւ:

Տեղի ունեցաւ նաեւ աւանդութիւն դարձած վիճակահանութիւնը:

Բոլորին վարձքը կատար:

Յիշենք նաեւ, որ Ս. Յակոբայ տօնին առթիւ Դեկտեմբեր 13-ին եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ նախատօնանք, իսկ յաջորդ օրը՝ Դեկտեմբեր 14-ին պիտի պատրագէ եւ յաւուր պատշաճի պիտի բարոզէ Յովնան Արք. Տէրտէրեան, առաջնորդ Հայաստանեայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի:

ԱՐՈՒԵՍԻ ԲՐՈՆԻԿԹԱՏԵՐԱԿԱՆ

Յ. Ս.

Վայր – «Լունա Փլէյխաուս» Հեղինակ – Էտուրըրտ Ալպի Քատերակ Zoo story bi Count The Ways»
Քատերակներու խումբ մը երիտասարդներ

Լունա Փլէյխաուսի Մասին
Աւելի քան տարիէ մը իր ստեղծումէն սաղին, ղեկավարութեամբ փորձառու դերասան եւ բեմադրիչ Արամասղ ստեփանեանի եւ իր խումբ մը թատրոնի նուիրեալներու, Կլէյտէյլի մէջ կը գործէ այս փոքր թատերասահը, շուրջ 45-50 ամիս, ֆրանսերէնով պիտի նկարագրուէր «Theatre de poche» այսինքն «Գրպանի թատրոն» արդէն իսկ ուշադրութեան արժանացած է թատերասէր հասարակութեան մը, կարելի է ըսել թատերասէր հաւատարմներու որոնք ներկայ կ'ըլլան գրեթէ շաբաթական խառը ներկայացումներու, հայերէն եւ անգլերէն լեզուներով, եւ միեւնոյն ատեն խառը դերասաններով: Բացի իր սեփական թատերական ներկայացումներէն, տարբեր բովանդակութեամբ եւ տարբեր ժանրերով, «Լունա»-ն կը հանդիսանայ հիւր ներկայացումներու վայր, ինչ որ խիստ գնահատուելի է տրուած դիւրութեան եւ նպաստին համար:

Այսպէս, երկու շաբաթներու վրայ երկարող, Օգոստոս ամսուայ ընթացքին «Լունա Փլէյխաուսը» տրամադրուած էր խումբ մը թատրոնի նուիրուած երիտասարդներու, որոնք նոր մուտք կը գործէին թատերական արուեստի արհեստավարժ ասպարէզէն ներս, եւ այս առիթով, ձեռք ձգած բաւականին լուրջ յաջողութիւն:

ՀԵՂԻՆԱԿ ԷՏՈՒԼՐՏ ԱԼՊԻԻ ՄԱՍԻՆ

1928-ին ծնած ամերիկացի թատերագիր էտուրըրտ Ալպի իր ստեղծագործական արուեստը պիտի յարմարցնէր Եւրոպայի մէջ ծնունդ առած «անհեթեթ թատրոնով» (Theatre of the Absurd) ճիւղին, եւ բաւականին լուրջ յաջողութիւն գտնէր: Ալպի գրեթէ պիտի մասնագիտանար մարդկային կացութեան ոչ շատ համակրելի դրսեւորումներու մասին, հետեւողութեամբ եւրոպացի թատերագիրներ ժան ժենէի, Մամուէլ Պեքեթի, Եոնեսքոյի եւ այլոց: Իր ամենէն հռչակաւոր փիեսը կը կոչուէր «Who's afraid of Virginia Wolf», որ բաւականին մեծ հռչակ շահեցաւ թէ իբրեւ փիես, եւ թէ իբրեւ ֆիլմ, էլիզապէթ Թէյլըրի խաղարկութեամբ:

Ներկայացուած երկու թատերակները, մէկ արարնոց, կը կոչուէին «Zoo story» եւ «Counting the ways», երկուքն ալ իրականութեան եւ անհեթեթութեան միջեւ տարուբերող կացութիւններու քննարկումներով յատկանշուած: «The Zoo Story»-ի մէջ Ալպի կը ներկայացնէ ընկերային անտունի մը հանդիպումը կենդանաբանական պարտէզի մը մէջ մէկ ուրիշի մը հետ, եւ կ'ուզէ անոր հետ իրական, ապրուած փոխ-յարաբերութիւն մը հաստատել, հանդիպում որ սակայն կ'աւարտի ողբերգութեամբ:

«The Zoo Story»-ի երկու դերասանները կը հանդիսանային Ռաֆֆի Պարսումեան, հանրածանօթ մահախնամ վարչէ Պար-

սումեանի որդին, որ պատիւով եւ արժանաւորապէս կը ներկայացնէր իր արուեստագէտ ընտանիքի գաւակ ըլլալու հանգամանքը: Ռաֆֆի օժտուած է անհրաժեշտ ֆիզիքական կազմով, մանաւանդ ունի դէմքի, յատկապէս աչքերու եւ ձայնի յատկանիշներով, որոնք իր ներկայութիւնը բեմէն ներս հաճելի կը դարձնեն: Ինք շրջանաւարտ եղած է հռչակաւոր Քարնեկի Մելլըն թատերական հաստատութեան, եւ արդէն իսկ պատասխանատու դերերով հանդէս եկած է, խաղալով նոյնիսկ Շէքսպիրեան փիեսներու մէջ: Ռաֆֆին կը սպասէ թատերական լուրջ ապագայ մը, եւ պէտք է յուսալ որ ինք կը շարունակէ առանց ազդուելու թատրոնի պահանջած դժուարութիւններէն:

«The Zoo Story»-ի մէջ, Ռաֆֆի խաղընկերն էր Ատամ Սիլատի, որ յաջողութեամբ պիտի մարմնաւորէր անտունի մը հետ պատահական խօսակցի մը կացութիւնը, եւ ձայնային եւ դիմային բաւական երանգային դրսեւորումներով կը յաջողէր իր կերպարը ներկայացնել:

Երկրորդ թատերակը կը կոչուէր «Counting the ways» շատ հաւանաբար ազդուած հռչակաւոր բանաստեղծուհի, էլիզապէթ Պարսումեանի մէկ բանաստեղծութենէն, «How do I love thee, let me count the ways»: Արական եւ իզական սեռի երկու ներկայացուցիչներու իրարու հետ կը զրուցեն սիրոյ յաւիտեանական նիւթի մասին, եւ անոր տարբեր դրսեւորումներու մասին: Բաւականին նուրբ դերակատարութիւն պահանջող այս փոքր պատկերներով թատերակը յաջողութեամբ պիտի մարմնաւորէր Ռաֆֆի Պարսումեան, եւ էրին ձուլին, որ նոյնպէս շրջանաւարտ եղած է Քարնեկի Մելլըն համալսարանէն: Թէ Ռաֆֆի եւ թէ ձուլին, իրենց երիտասարդական ապրումներով յաջողեցան սիրոյ բարդ հոգեվիճակի բազմաթիւ կերպարանափոխումները ներկայացնել սրահի լեցուն թատերասէրներու եւ արժանաւալ խանդավառ ծափահարութեանց:

Այս գոյգ ներկայացումներու բեմադրիչն էր Հայկ Համբարձումեան, եւ արտադրիչը դարձեալ Պարսումեան ընտանիքէն, Շահէ Պարսումեան: Յաջողութեան ձեռքբերման պիտի նպաստէին էլենա Քորձեան, (բեմավար), Հենրիկ Մանսուրեան (լոյսերու պատասխանատու) Հուրի Մահսէրէճեան, (զգեստաւորում), եւ Ռընէ խաչատուրեան (ազդի յղացող):

Մեր ստացած խիստ հաճելի տպաւորութիւնը այս երկու կարճ փիեսներու ներկայացումէն, տեսակ մը գրաւականը պիտի հանդիսանայ, երիտասարդական հաւատքով եւ խանդավառութեամբ ստեղծուած ասպարէզներուն, եւ լաւագոյն վստահութիւնը որ այս խումբի երիտասարդ տարրերը առանց յուսահատուելու եւ առանց ընկրկելու կը շարունակեն իրենց «խենթ» յանձնառութիւնը, ապագային թատերասէրներու պարգեւելով հոգեկան բաւարարութիւն եւ հաճոյք:

Ապրէք սղաք եւ յաջողութիւն ձեզի:

ԲԱՑՈՒԱԾ Է
Հիպնոսարուժութեան կեդրոն
դեկավարութեամբ՝
Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի
Փասատիմայի մէջ
Ամէն օր՝
առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կ.ե. ժամը
3:00
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104
Հեռախոս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ
«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ
կը դարմանուին.
-Մարմնային բրոնիկ հիւանդութիւններ, արեան
գերբնշտւմ, շափարախտ, ազմա, եւ այլն:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ ԳԻՐՔԻ ԶՐԱՏԱՐԱՎՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Շարունակում էք 14-էն

հրապարակ հանելու:

Գրքի առաջին էջի վրայ կայ «20Ն» մը, բառականխն ընդարձակ, եւ սակայն ամենէն կարեւորը, առաջինն է, այսինքն՝

Չօն՝ «Հ.Մ.Մ.ի տեսլապաշտ եւ գոհաբեր անծանօթ գինուորին»:

Կայ նաեւ յիշատակութիւնը իր ընտանեկան պարագաներէն ոմանց:

Հ.Մ.Մ.Ի ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Գրքի ընթերցումէն ետք, հետեւեալ արժեւորումը եւ գնահատանքը կարելի է բանաձեւել.

1. Հ.Մ.Մ. հանդիսացած է հայակերտումի դպրոց մը:
2. Հայապահպանումի ջերմոց մը:

3. Մարգարան մը «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ» նշանաբանով, եւ «միշտ պատրաստ» լողունքով:

4. «Ամբողջական Հայաստան եւ ամբողջական հայութիւն» տեսլականով միութիւն մը:

5. Շեփորահարը հայ ժողովուրդի ազգային եւ պետական վերածնունդին, ինչպէս նաեւ հայրենահաւաքի եւ հայրենադարձի ջատագովը:

6. Հ.Մ.Մ.ի նպաստը լիբանանեան եւ սուրիական սփորթի գարգացման, մարզական տարբեր մարզաձեւերու մէջ, ինչպէս նաեւ մշակութային միջազգային յարաբերութեանց:

7. Հ.Մ.Մ.ի ստեղծած Սփիւռք-Հայրենիք կապը:

8. Թերեւս արդար կ'ըլլար Հ.Մ.Մ.ի անունին վրայ աւելցնել Յրդ Մ. մը, եւ գայն կոչել Հ.Մ.Մ. քանի որ իր ամբողջ գոյութեան ընթացքին, մարզականի կողքին, Հ.Մ.Մ. ունեցած է ճոխ մշակութային գործունէութիւն, որ կը շարունակուի մինչեւ այսօր, այսինքն հայ Մարմնա-Մարզական-Մշակութային Միութիւն, որու կոչումին արժանի է Հ.Մ.Մ.ը:

Այս գնահատականները յստակորէն դրսեւորուած են Հ.Մ.Մ. հաստոյ-հանգանակին եւ ծրագիր-կանոնագրին մէջ: Ահաւասիկ փոքր մէջբերում մը.

«Հայ Մարմնամարզական Միութիւնը (Հ.Մ.Մ.) հիմնուեցաւ այն աներկբայ համոզումով, որ անոր հովանիին տակ կը համախմբուի յետեղեռնեան սերունդը, որ ոչ միայն ֆուտպոլ եւ տարբեր մարզաձեւեր կիրարկէ, այլ ամէն բանէ առաջ, ան կը լիցքաւորուի ճշմարիտ հայրենասիրութեամբ, հայրենասիրական ոգիով, իր մարմնին հետ կը մարզէ իր միտքն ու հոգին, «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» նշանաբանով»: Ծրագրին մէջ նաեւ յիշուած է «Հայ երիտասարդին տրուելիք ֆիզիքական կրթութեան գուճահետ՝ անոր ջամբել բարոյական եւ մտային դաստիարակութիւն, ազգային հայրենասիրական ոգի եւ մանաւանդ՝ սէր Մայր Հայրենիքի հանդէպ»:

Հ.Մ.Մ.Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Մ.Մ.ի հիմնադրութիւնը Հ.Մ.Մ.ը հիմնուած է Հայկազուրկ մէջ, Յովհաննէս Գասարճեանի կողմէ: Նախապէս Այնթապի մէջ, 1921 թուականին, գոյութիւն ունեցած է «Արարատ» անունով ֆուտպոլի խումբը, որ Հայկազուրկ մէջ ճանչցուե-

ցաւ իբրեւ Հ.Մ.Մ.ի «Արարատ» խումբ, եւ այս երկուքին միացումով հիմնուեցաւ Հ.Մ.Մ.ը: Գասարճեանի կողքին, Մարաֆեան կը յիշէ Հայկազուրկ Հ.Մ.Մ.ի հիմնադիրներէն, անունները Յովսէփ Սրապոնեանի, Բարսեղ Յարութիւնեանի, Վահրիճ Կէօքճեանի, Յարութիւն Մոմճեանի, Յովհաննէս Տապաղեանի եւ ուրիշներ:

Բացի Հ.Մ.Մ.էն ընկ. Մարաֆեան լրջօրէն կ'անդրադառնայ Հ.Մ.Մ.ի սկաւտական շարժումի մասին, որուն ստեղծողը եղած է փրոֆ. Խաչեր Գալուստեան, եւ իր օգնականներէն ընկ. Գրիգոր Գոնտուրալեան, եւ ուրիշներ շեշտելով կարեւորութիւնը Կիլիկեան վարժարանի:

Հայկազուրկ մէջ սկաւտական շարժումը կ'ունենայ բազմաանգամ եւ փառաւոր փողերախումբ մը, որ կը կազմակերպէ տպաւորիչ եւ անմոռանալի տողանցքներ Հայկազուրկ, Գամակոս, Պէյրութ եւ այլ վայրեր:

Հայկազուրկ Դամասկոս անցնելով, հեղինակը որոշ մանրամասնութեամբ կը նկարագրէ Հ.Մ.Մ.ի ծնունդը Սուրբոյ մայրաքաղաքին մէջ: Հոն կը հիմնուի Տալուրիկ Միութիւնը, իր ֆուտպոլով, սկզբնապէս, տարբեր մարզաձեւերով, նոյնիսկ «Պանդուխտ» անուն թատերախումբով: Մարաֆեան կը յիշէ Ս. Մարգիս եկեղեցին, Առաջնորդարանը, իր իրերայաջորդ առաջնորդներով եւ մարզական ճոխ գործունէութեամբ:

Հայկազուրկ, Դամասկոսէն ետք, տրամաբանօրէն, Հ.Մ.Մ.ը կը հիմնուէր Պէյրութի մէջ, 1925 թուականին, որուն առաջին հիմնադիր տեսնապետը եղած է ծանօթ մտաւորական եւ ազգային-հասարակական գործիչ՝ Վազգէն Պաղճեան (Այգուռնի): Լիբանանի մէջ, Հ.Մ.Մ. ունեցած է բազմաթիւ մասնաճիւղեր, տարբեր շրջաններու մէջ - Պէյրութ, Թրիպոլի, Ճիւնի, Զահլէ, Համմանա, Պալատիք, մէկ խօսքով, ամէն տեղ ուր ափ մը հայութիւն կար...

Մարաֆեան լայնօրէն կ'անդրադառնայ Լիբանանի Հ.Մ.Մ.ի կեանքին մասին - ծանօթ անուններ (տեսնել ցանկ մը քիչ վարը) յաղթական Հ.Մ.Մ.ի ֆուտպոլի խաղեր, մարզահաւաքներ, վարչութիւններու պատկանող եւ ծառայող անուններ, տարբեր մարզաձեւեր, մշակութային ձեռնարկներ եւ այլն: Յիշուած եւ նկարագրուած են նոյնիսկ բռնցքամարտի հերոսներու անունները: Ճոխ կերպով նկարագրուած է Հայաստանի մարզական «Սպարտակ» եւ ապա «Արարատ» պատուիրակութեան այցը Սուրիա, Լիբանան, Հ.Մ.Մ.ի հրաւերով եւ անոր ստեղծած խանդավառութիւնը հայրենակարօտ անդամներու մօտ: Նաեւ երկարօրէն անդրադարձ եղած է ներգաղթի ընթացքին, Հ.Մ.Մ. շրջանակին եւ սկաւտներու կատարած հայրենասիրական գործին:

Հ.Մ.Մ.Ի ՔԱՅԼԵՐԳԸ

Հետաքրքրականը այս քայլերգին մէջ, այն էր որ թէ հեղինակը եւ թէ գայն երաժշտութեան վերածողը, ինձի անձնապէս, ինչպէս նաեւ Հ.Մ.Մ.ի հիմնադիր ղեկավարներէն եւ մարզիկներէն շատեր, ծանօթ էին թէ իրենց ղէմքերով, թէ իրենց անուններով, եւ հաճելի էր տեսնել անոնց լուսանկարները գրքին էջերուն վրայ:

Այսպէս, քայլերգի հեղինակ հանդիսացած է մեր բարեկամ, մտաւորական եւ կուսակցական գործիչ

ընկ. Մանուէլ Արամեանը, իսկ քայլերգի երաժշտութիւնը յօրինած է փրոֆ. Աշոտ Պատմագրեանը:

Գրքին մէջ, նաեւ կայ բանաստեղծութիւն մը, գրուած Հայկազուրկ, 1946-ին, խորագիր ունենալով «Հ.Մ.Մ.ի արիւնքերուն»: Հեղինակն է հանրածանօթ մտաւորական, քաղաքական գործիչ, կրթական մշակ, Կիլիկեան վարժարանէն մինչեւ Թէքէեան, հաւատաւոր Հ.Մ.Մ.ական եւ Հայկազուրկ հիմնադիրներէն, պրն. Երուանդ Պապայեան, որ այդ երեկոյ ներկայ ըլլալով, յատուկ գնահատանքի արժանացաւ: Նաեւ կայ բանաստեղծութիւն մը, գրուած Անդրանիկ Պողոթեանի կողմէ, Հ.Մ.Մ.ի 35րդ տարեդարձին:

Հ.Մ.Մ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԻՒԹԻՒՆԸ

Մարգարանին գուճահետ, Հ.Մ.Մ. ունեցած է ճոխ, եւ տեսակաւոր մշակութային գործունէութիւն, Հայկազուրկ, Դամասկոս, Պէյրութ եւ ուր որ մասնաճիւղ ունեցած է: Պարզ յիշեցման կարգով, պէտք է նշել տարբեր տարբեր թատերախումբերը, «Պանդուխտ», «Անդրանիկ», եւ այլն, երգչախումբերը՝ «Գողթան», «Ալեմշահ», եւ ուրիշներ, պարախումբերը, պարբերաթերթերը՝ «Կայծ», «Արարատ-Մարգարան», ձագ-էստարատային խումբ, որակաւոր դասախօսութիւններ, եւ այլն: Դժուար է այս բոլորին մասին առանձնաբար անդրադառնալ:

ԱՆՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՆՈՒՆՆԵՐ

Յիշուեցան որոշ հիմնադիրներու անուններ Հայկազուրկ, Դամասկոս եւ Պէյրութ: Քանի որ գրեթէ 6-7 տասնամեակներ եղած են հետեւողը Հ.Մ.Մ.ի կեանքին, այստեղ որոշ գնահատանքով եւ յուշումով կը ներկայացնեմ ցանկ մը անուններու որոնք ընկ. Մարաֆեանի գրքին մէջ լայնօրէն տեղ գտած են:

Ուրեմն, տակաւին ողջերէն, ահաւասիկ ցանկ մը:

Ընկերներ, Հ.Մ.Մ.ականներ, Երուանդ Պապայեան, Յովսէփ Ասատուրեան, որուն Հ.Մ.Մ.ականի հանգամանքը, ինչպէս նաեւ 85 ամ-

եակը իր ծննդեան յատուկ յիշատակութեան արժանացաւ, Յակոբ Սինանեան, Պէպօ Սիմոնեան, Պետրոս Մուշեան, Հաննէսեան եղբայրներ, Կարապետ եւ Յովհաննէս, Պօղոս Մարգարեան, Փայլակ Ահարոնեան, Թերեւս կան ուրիշներ ալ որոնց ծանօթ չեմ:

Իսկ պատմութեան անցնողներէն, Վազգէն Այգուռնի, Խաչեր Գալուստեան, Միհրան Սէֆէրեան, Բենիամին Ժամկոչեան, Բիւզանդ Կիլիկեան, Արմէն Ղարիպ, Վահրիճ Ճէրճեան, Գնել Արք. Ճէրճեան, Անթուան Քէտէրեան, Ենովք Տարտաղանեան, Գրիգոր Թաթուլեան, Լեւոն Երեւանեան, Լեւոն Գուտուգեան, Յակոբ Օղլուքեան, Արսէն Կիտուր, Գրիգոր Լաչինեան, Ասատուր Կիլիկեան, Գէորգ Տարօնի եւ բազմաթիւ ուրիշներ:

Իսկ մարզիկ-ֆուտպոլիստներէն, կը յիշեմ մասնաւորապէս հետեւեալները - Աւետիս Քէշիշեանը, Ստեփան Օգնայեանը, Պոտորոս Գանազարեանը, Արամայիս Ճէրճեանը, բայց մանաւանդ Գէորգ Ճանճանեանը, որմէ յուզիչ դրուագ մըն ալ կայ գրքին մէջ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ «Հ.Մ.Մ.ի Պատմութեան Հետքերով» գրքի մասին, կարգացուած գրախօսականին հակիրճ մէկ նկարագրութիւնը: Գրքի ընթերցումը, իմ եւ շատերուն մօտ վերապրում եւ յուշ է: Ինչ կը վերաբերի ընկ. Տիգրան Մարաֆեանին, մենք միայն կրնանք գնահատել եւ շնորհաւորել զինք այս խիստ կարեւոր գործին համար, ողջունելի հատոր մը արդարեւ, եւ յուսալ որ Բ. հատորը չուշանար: Ընկ. Մարաֆեան, իր ծննդավայր Սովուք Օլուքէն, Հայկազուրկ, Ամերիկա, ուր որ գտնուած է ապրած է եւ եղած է իր պատկանած միութեան դրօշակալիւրը, անդամը, միութեանակաւոր, պատասխանատուն, հիմնադիրը, եւ մեզի հրամցուցած Ա. հատորը: Շնորհաւորելով զինք, մաղթենք իրեն երկար եւ առողջ կեանք, եւ կարողանայ պատրաստել գրքին Բ. հատորը, մօտիկ ապագային:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ ՀԵՌՈՒՍՏՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ
CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)
GLOBACAST SATELLITE
ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...
Մեծ ժողովրդականութիւն Վայելող
Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը
Այժմ Կը Սփռուի
GlobeCast
Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի
Ամբողջ Տարածքին
Դուք Կրնաք Դիտել
Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ
Երաժշտական Հաղորդումներ - Եւայլն
Մանրամասնութիւններու Համար
Հեռահայել 818.547.9696

ՈՒՂԵԿՈՐՈՅՍ ԳՆԱՑՔԸ

Շարունակում է 13-էն

կակշռել կը ձեռնարկեն ներկաներուն շարժումները: Առեւի մօտենալով, սակայն, թափուկ կը հաստատե՞ թէ ձեռքերուն բռնած խուրձն ու ցպիկները խօլ ելեւէջներով կը շարժին անոր կամքէն անկախաբար, առաջին ճամբորդակառքէն՝ երկվիթանիէն հասած ընդդատակեայ հեռավար տիկնաթեւերու միջոցով: Այս սրահին բնակիչները եւս, ներառեալ տիկնապարը, ամբողջական կազմով խամաճիկներ են որոնք ուղղակիօրէն են թարկուած են արքայիկի կամքին:

Երկրորդին շատ նման է երրորդ ճամբորդակառքը՝ «Սափրազուլուխների Օթեակը» իր կեղծ տիկնապարով ու խամաճիկներով: Բիրտ ուժի հըռ կամակատար բիրտ երկրտանիներ են՝ վագրի նման մռնչող եւ քալած ատեն ամբողջ երկրագունդը դղրդացնող այս գանգուածները: Անոնց հայելանման ածիւրած գանգերուն մէջ լիւխացող մտածելանիւթի հագիւնչմարելի հետքեր թերեւս կարելի ըլլայ գտնել՝ ամբողջ օրը ձեռքի ելեկտրալամբով իրենց ոսկրատուփերը մանրակրկիտ խուզարկութեան ենթարկելէ ետք: Իսկ երբ վերէն վար սպիտակ համազգեստով ու լայնատարած ուսադիրներով անոնք իրենց հատու հայեացքները սեւեռեն ժողովուրդի աչքերուն վրայ ու լայն բանան իրենց ծռմռած բերանները, այն ատեն կը լռեն աշխարհի բոլոր անուանի ուղղադէտները, շիրիմին մէջ կը պապանձի մարաջախտ Բագրամեանը, եւ անուղղի մէջ կ'անէնանան երկրի բոլոր ըմբոստ ուժերն ու ընդդիմադիրները: Ահա այսպիսին են սափրազուլուխ խամաճիկները:

Չորրորդ ճամբորդակառքը՝ նախկիններու գեթութեան սպասարկուն է եւ հայթայթիչը: Խոհանոցներու խոհարար խամաճիկներու կեդրոնատեղին է ասիկա: Հոս եւս կեղծ տիկնապար մը բազմած է խոհանոցին մէջտեղ, բարձրադիր սեղանի մը առջեւ: Թեւերու համեստ խուրձ մը եւ քանի մը փոքր ցպիկներ իր կամքէն անկախ կը շարժին ձեռքերուն մէջ, մինչ խոհարար տիկնիկները ոգի ի բռին կ'աշխատին բազմազգեղ երեւոյթ մը ստեղծել իրենց շուրջ: Այստեղ եւս ամբողջ անձնակազմը ընդհատակեայ թեւերով ուղղակիօրէն կը հպատակի արքայիկ Ալի Պապայի բացարձակ կամքին: Ի վերջոյ, «ստրանագիտական» առաջնային նշանակութիւն ունի հոս պատրաստուած ուտելիքը, չէ՞: Հապա՞ եթէ թունաւորեն...:

Հինգերորդէն սկսեալ, գնացքի բոլոր ճամբորդակառքերը իսկութեան մէջ լքեալ, աղքատիկ ու հինցած բեռնակառքեր են: Իւրաքանչիւրի մուտքին պահակ կանգնած է իր գիրութեամբ հասակը գերազանցող հրացանակիր սարսափազդու, ճմլթկուած դէմքով եւ լայնանիստ քիթն ու մուկթը իրար խառնուած ոստիկան մը՝ հաստ մտրակը ձեռքին: Թաթուկ կը պատրաստուի թիւ 5 բեռնակառքէն ներս անցնել:

- Ո՞ւր այդպէս, - կը գոռայ պահակ ոստիկանը ամպրոպի ասեղութեամբ եւ կայծակի աչքերով: - Անցախօսող: Այստեղ սպահովական գօտի է:

- Ապրաքատապրա, - իրագեկ մարդու վարժ շեշտով եւ կրկնելէ յոգնած պաշտօնատարի ձանձրոյ-

թի նմանակումով ու յօրանջելով կ'արտասանէ թաթուկ:

- Օ, այսօրուայ անցախօսն է, չէ՞, անցէ՛ք, աղաչում եմ, - կ'ըսէ մեծապէս տպաւորուած ու կատարելապէս խեղճացած պահակը որ կ'առնէ իր մէջքէն կախուած խոշոր փականքը եւ մեծ իրարանցումով վերջապէս կը բանայ մուտքի դուռը:

Թաթուկ կը մտնէ կիսամութ կառասրահ: Պահ մը կը վարանի յառաջանալ մինչեւ որ աչքերը վարժուին կիսամութին եւ ոտքերը համոզուին թէ ապահով է քալելը: Ելեկտրալամբի պղտոր լոյսը նախ պտոյտ կ'ընէ չորս պատերուն վրայ ուր ան կը կարդայ ֆոսֆորաձակ որմագղները մէկիկ մէկիկ: Անոնցմէ առաջինը կը յայտարարէ. «Մենք սիրում ենք մեր քաղբանտարկեալներին - նրանք մեր եղբայրներ են»: Երկրորդը. «Արցախեան ազատամարտիկները մեր երկրի գաւրունն են - թէկուզ բանտարկենք կամ սպանենք նրանց»: Երրորդը. «Մէքը Սերժիկ արքայի ամենաթանկ պարգեւն է մեր ժողովրդի համար - նոյնիսկ քաղաքական հակառակորդների հանդէպ»: Չորրորդը. «Մեծն բարեգութ Սերժիկ արքան չի սիրի չարերը - նրանց բանտ կը գցի՝ սոսկ կրթելու՛ համար»: Հետաքրքիր է, կը մտածէ թաթուկ, այստեղ որմագիր մի ամբողջ բարոյագիրք կայ որ հնաբանների կողմից յայտնագործման է սպասում: Իր աչքերը տակաւ կը վարժուին ներսի մթութեան: Հիմա արդէն կրնայ գանազանել գետինը փռուած քրտնախառն աղտոտած մահիճներու վրայ գալարուող ցաւատանջ մարմինները որոնք առանց յոյսի կամ խնամքի ձգուած են իրենց մաքախտութեան (քանի բախտի մասին խօսելն անհեթեթութիւն պիտի ըլլար Սերժիտանի մէջ): Իրենց ցաւերուն անձնատուր, անոնք չեն տեսներ կամ լսեր զինք, չեն խօսիր իրեն: Շղթայակապուած են ամէնքն ալ:

- Մարգանքի ժամն է, - կը խանդավառուի պահակը ներս արշաւելով:

Մարգանքին մասնակցելու համար իր ետեւէն կառասրահ կը մտնեն դրացի նոյնատիպ բեռնակառքերու միւս հինգ պահակները՝ իւրաքանչիւրը իր սեփական մտրակով:

Ի՞նչ մարգանք է սա, գարմացական հարց կու տայ թաթուկ ինքն իրեն: Ու յանկարծ կուրծքին տակ անաւոր կծկում մը իր ամբողջ էութեամբ կը ցնցէ զինք երբ մտովի կ'ուրուագծուի իր աչքերուն առջեւ նախապատրաստուող անտրակելի անհաւատալին:

Ու մտրակները շաչելով, վեց պահակներ աջ ու ձախ գոհունակ տատանուելով կը մօտենան կառասրահի միւս քաղբանտարկեալներէն պատահաբար վերցուած վեցին: Մտրակները կ'իջնեն կիսամերկ մարմիններու բոլոր մասերուն - կուակը, ոտքերը, ձեռքերը, գլուխը: Մտրակուողներէն որեւէ մէկը ձայն չի հաներ: Գետին փռուած՝ անոնք արդէն կորանցուցած են իրենց ուշքը: Իրենց սեփական մաքուր արիւնը կարմիր բորբ խառով ծածկած է անոնց խոշտանգուած մարմինները: Մտրակները կը շարունակեն ձօժիլ մինչեւ յիսուներորդ հարուածը, որմէ ետք, իրենց ըրածէն գոհ ու ֆիզիքապէս բանարարուած, վեց պահակները հեշտագին հեւալով եւ իրենց վաւաշտ շրթունքները շափշփելով

«Հ.Մ.Ս.-Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ» ՀԵՂԻՆԱԿ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆ

Շարունակում է 14-էն

դարձած է այդ շրջանի Հ.Մ.Ս.-ի ղեկավարներուն եւ մարզիչներուն, որոնց անխոնջ ու նուիրեալ աշխատանքին արդիւնքը հանդիսացան միութեան տարած յաղթանակներն ու արձանագրած յաջողութիւնները մարզական, մշակութային, դաստիարակչական եւ ընկերային մարզերէն ներս:

Վերոյիշեալ ղեկավարներու մէջ, անտարակոյս, իր բացառիկ տեղը ունեցաւ եւ տակաւին ունի Տիգրան Սարաֆեան: Ան պատանի տարիքէն իր ամբողջ ուժն ու եռանդը նուիրեց Հ.Մ.Ս.-ի՝ եւ այդ ճամբով նաեւ՝ հայ ժողովուրդի ծաղկման ու զարգացման աշխատանքին, արժանանալով ո՛չ միայն միութեանական իր ընկերներուն՝ այլ Սուրբոյ եւ Լիբանանի՝ ինչու չէ նաեւ հայրենիքի հայութեան գնահատանքին, սիրոյն ու յարգանքին: Իր բնաւորութեան ու խառնուածքին ուղիղ համեմատող համեստութիւնը արգելք հանդիսացած է որ Տիգրան Սարաֆեան «Պատմութեան Հետքերով»-ի մէջ խոշորացոյցի տակ դնէ իր կատարած եզակի աշխատանքը Հ.Մ.Ս.-ի ծաղկման ու վերելքին մէջ, որպէս շարքային անդամ, սկսուտ եւ հուսկ՝ պատասխանատու ղեկավար:

Տիգրան Սարաֆեան իր անբասիր վարքով, դիւրահաղորդ բնաւորութեամբ, ընկերասիրութեամբ, նուիրուածութեամբ ու յատկապէս ջերմ հայրենասիրութեամբ, եղած է օրինակելի անձ մը, որ անգնահատելի ազդեցութիւն թողած է յատկապէս երիտասարդ Հ.Մ.Ս.-ականներու վրայ: Սարաֆեան իրեն տրուած սէրն ու յարգանքը դրամով չէ գնած, այլ վաստակած է

դադար կ'առնեն պահ մը:

Քիչ ետք պահակները կը մօտենան քաղբանտարկեալներու երկրորդ վեցեակի մը: Թիւ 5 բեռնակառքի պահակը, սակայն, մտրակումն սկսելէ առաջ հաստ լաթով մը կը կապէ անոնց աչքերը:

- Ես սարսափում եմ նրանց աչքերից, - հագիւ լսելի ձայնով կը շշնջայ ան: - Ես վախենում եմ նրանց ծեծելից բաց աչքերով: Զարդէն աւելի հեշտ է երբ փակ են աչքերը:

Թաթուկ ա՛լ անկարող է գապել իր մէջ կուտակուող ցասման կրակները: Պահակին թեւէն կը բռնէ իր մկաններու համատեղուած գերագոյն ուժով եւ անոր գլուխը արագ յաջորդականութեամբ կը մխրձէ պատերուն:

- Կարդա՛, - կը գոռայ բարկացալ, - կարդա՛ քո բարեգո՛ւթ Սերժիկ արքայիկի սիրոյ ծանուցումները քաղբանտարկեալների հասցէին: Խօսքը լուսինն է հասել, գործը ճահիճումն է:

Պահակը իր անբան աչքերը համարեա կը կպցնէ որմագրի գրութիւններուն: Մեծ ուշադրութեամբ ու կեդրոնացումով մանրակրկիտ կը գննէ ամէն մէկը: Ապա, յանձնառութեան խուսափող անթափանց նայուածքով կը դառնայ թաթուլին եւ՝

- Էս գիր ես չեմ կարա կարդա, - երկչոտ կը կմկմայ ամաչելով եւ աչքերը գետնին հակելով: - Էն իմ հեռու էր կիր որ կից է կա, գիրն ուրիշ ա:

Եկու՛ր մի խենթանար: - Թէ չես կարա կարդա, հապա ինչո՞ւ էդպէս երկար-երկար նայե-

տարիներու անխոնջ, յարատեւ, նուիրեալ, հալալ աշխատանքով, ինչպէս պիտի ըսէր ժողովուրդը:

Կրնայինք դեռ երկար գրել Տիգրան Սարաֆեանի՝ այս անխոնջ ու նուիրեալ ազգային-հասարակական գործիչի՝ ազնիւ մարդու ու մեծ հայրենասէրի մասին: Աւետարանի բնութագրութեամբ «Ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի» (ծառը իր տուած պտուղով կը ճանչցուի):

Իսկ Տիգրան Սարաֆեանի ծառին հայրենասամ պտուղով սնած են, աւելի քան կէս դար, հազարաւոր հայ պատանի-պարմանուհիներ, երիտասարդ-երիտասարդուհիներ, որոնցմէ շատեր, իրենց հերթին, տնկած են ծառ եւ անոր պտուղէն քամուած հիւթով սնուցած իրենց յաջորդող սերունդը:

Տիգրան Սարաֆեանի «Հ.Մ.Ս.-ի պատմութեան Հետքերով»-ը է նաեւ պատգամ մը: Ան կոչ մըն է մեր կազմակերպութիւններու բոլոր ղեկավարներուն, որ գրեն իրենց չուշերն ու գանոնք ժառանգ ձգեն հետագայ սերունդներուն: Որքան պիտի դիւրանար հետագայ պատմագրին գործը, եթէ սփիւռքի մէջ գործող մարզական, մշակութային, կրթական ու ընկերային միութիւններու, հաստատութիւններու եւ կազմակերպութիւններու ղեկավարները գրէին իրենց չուշերը...:

Մեզի կը մնայ այսու շնորհաւորել Տիգրան Սարաֆեանը իր արժէքաւոր աշխատանքին համար եւ մաղթել իրեն առողջութիւն, որպէսզի ան կարենայ շարունակել իր ազգանուէր աշխատանքը դեռ երկար տարիներ:

Վարձքը կատար, սիրելի Տիգրան:

ցիր որմագղներին, մա՛րդ Աստուծոյ (ու միտքէն՝ եթէ մա՛րդ ես անշուշտ, էդ էլ Աստուծոյ մարդ... ա՛յ, ա՛յ, ա՛յ):

Դեռ քիչ առաջ մեծ գոհունակութեամբ քաղբանտարկեալները մտրակող պահակին երկչոտ, ամաչկոտ եւ անբան աչքերն են դարձեալ որ կը հալածեն թաթուլի բանակալութիւնը եւ կը փորձեն զիտնալ թէ ե՞րբ է յորդելու իր համբերութեան բաժակը:

- Ես ինձ ասացի՛ թէ էսքան մարդ կարա կարդա, ե՛ս էլ պէտք ա որ կարամ: Ասի՛ մարդ Աստուծ, հա՛, լաւ ասացիր, մարդ Աստուծ, քո խելքն էլ փառք Աստուծ իր տեղն ա, դու ի՞նչ պակաս ունես, մի լա՛ւ նայիս էս կոմիկական նշաններին, ո՛վ գիտի դու էլ ջուրի պէս կարդաս:

Ու կ'եզրակացնէ՝ կտրուկ. - Բայց ի՞նչ ասես, չստացուց:

Թաթուկ դուրս կ'ելլէ կախուսերով ու փլած սիրտով: Մնացեալ՝ վեցերորդէն մինչեւ տասներորդ բեռնակառքերը յաջորդաբար կը մտնէ ու կը լքէ խելակորոյս հալածականի մը քայլամոլոր վագրով: Իր կոկորդը պատուելու աստիճան բարձրադադակ կը կանչէ խուլ աստուծոյ մը ու կը պոռայ մամոնային խնկարկող իր պիղծ քուրմերու հասցէին: Ու կառաշարի վերջին կառքի ետեւի դռնէն լալահառաչ աղաղակներով դուրս փախած ատեն երեսն ի վար կ'իջնայ երկաթուղածղին վրան:

(Շարունակելի 2)

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏ ԵՒ ՓԻԼԵՆԻԿ ԳԼԽԱԴՈՐՈՒՄ ԵՆ ԱՂԻԲԱԿԸ

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության 20-րդ տուրում Երեւանի «Արարատ»ը կապանում 0:0 հաշուով աւարտելով հանդիպումը «Գանձասար»ի հետ հնարաւորութիւն տուեց «Փիլենիկ»ին հաւասարութիւն իրենց եւ այժմ այս թիմերը 43-ական միաւորով գլխաւորում են մրցաշարային աղիւսակը:



«Արարատ»ի հիմնական մրցակից «Փիլենիկ»ը մեծ դժուարութեամբ 1:0 հաշուով առաւելութեան հասաւ ետնապահ «Կիլիկիա»ի նկատմամբ: «Փիլենիկ»ի միակ կողը 88-րդ րոպէին նշանակեց Վարդան Պետրոսեանը:

Ոչ-ոքի գրանցուեց նաեւ «Միկա» - «Ուլիս» խաղում, որտեղ տանտերերի գլխաւոր մարզչի պաշտօնում իր նորամուտն էր նշում Սուրէն Բարսեղեանը: Պէտք է ընդգծել, որ Բարսեղեանի սաները մրցում էին, նրա նախկին թիմի՝ «Ուլիս»ի դէմ:

Գիւմրիում «Շիրակ»ը կարողացաւ ընդհատել պարտութիւնների շարքը՝ 1:1 հաշուով աւարտելով «Բանանց»ի հետ հանդիպումը: «Բանանց»ը հերթական 2 միաւորը կորցնելով՝ գործնականում զրկուեց մրցանակային տեղ գրաւելու հնարաւորութիւնից:

- Գանձասար» - «Արարատ» 0-0
- «Միկա» - «Ուլիս» 0-0
- «Փիլենիկ» - «Կիլիկիա» 1-0
- «Բանանց» - «Շիրակ» 1-1

20-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը ունի այսպիսի տեսք.

	Խաղ	Յաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Արարատ» Երեւան	20	13	4	3	33-15	43
«Փիլենիկ» Երեւան	20	13	4	3	29-11	43
«Միկա» Աշտարակ	20	10	5	5	28-18	35
«Գանձասար» Կապան	20	10	4	6	28-21	34
«Բանանց» Երեւան	20	8	5	7	25-19	29
«Ուլիս» Երեւան	20	5	4	11	14-23	19
«Շիրակ» Գիւմրի	20	3	3	14	11-29	12
«Կիլիկիա» Երեւան	20	2	3	15	15-47	9

Ս. ՏԵՐ-ՍԱՐԱԿԵԱՆԸ ԵՒ ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԸ՝ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱՆՄԱՏԻ ԵՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ

Չեռնոգորիայի Հերցեգ Նովի քաղաքում ընթացող 10-18 տարեկան շախմատիստների Եւրոպայի առաջնության 16 տարեկանների խմբում Հայաստանի պատանի շախմատիստ Սամուէլ Տէր-Սահակեանը, տանելով չորս անընդմէջ յաղթանակ եւ 2 հաւասարութիւն, մրցաշարի 6 փուլերից յետոյ 5 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը, եւս 5 շախմատիստներ վաստակել են 5-ական միաւոր:



Այս տարիքային խմբում հանդէս եկող Հայկ Վարդանեանը եւ Հայկ Թամազեանը 3,5 - ական միոլորով 30-49-րդ տեղերում են:

14 տարեկանների պայքարում եւս առաջատարը հայ է: Կարէն Վարդանեանը, որը իր վարկանիշով 35-րդն է մասնակիցների շարքում, 5 միաւորով ընթանում է առաջին տեղում: Նոյնքան միաւոր են վաստակել եւս շախմատիստներ: Մեր միւս շախմատիստները առայժմ աւելի համեատ արդիւնքներ ունեն, թէեւ նրանցից շատերը դեռ մետալ նուաճելու հնարաւորութիւն ունեն: Մասնաւորապէս 14 տարեկան Խաչատուր Երանեանը եւ 10-ամեայ Մանուէլ Պետրոսեանը վաստակել են 4-ական միաւորով եւ իրենց հասակակիցների հետ պայքարում մօտ են լաւագոյն տասնեակին:

Աղջիկների պայքարում Վարդուհի Քալաշեանը 4 միաւորով եզրափակում է 18 տարեկանների լաւագոյն տասնեակը:

ՇՆՈՐԱԴՈՐԱՆՔ

ԱՐԱ ՍԵՓԻԼԵԱՆԻ ԵՒ ՄԻՇԸԼԻՆ ԶԷՕՓՃԵԱՆԻ պսակադրութեան ուրախ առթիւ մեր ջերմ շնորհաւորութիւնները ամուսնացեալ զոյգին, անոնց ընտանեկան պարագաներուն, ի մասնաւորի Տէր եւ Տիկ. Ժողէֆ եւ Նուէր Սեփիլեաններուն եւ Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Անուշ Զէօփճեաններուն:

«ՄԱՍԻՍ»

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ Palm Springs

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

ԾԱՆՐԱՍՄԱՐՏԻ ԵՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՈՐՈՂՆԵՐԸ ԱՐԺԱՆԱՑԱՆ 1 ՈՍԿԷ, 3 ԱՐԾԱԹԵ ԵՒ 2 ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼՆԵՐՈՒ

Ալբանիայի Դուրես քաղաքում աւարտուած ծանրամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնում բաւական չաջող հանդէս եկան հայ ծանրորդները: Հայաստանի երիտասարդական հաւաքականը միանգամից 6 մետալի արժանացաւ (1 ոսկէ, 3 արծաթէ, 2 պրոնզէ):

Հայաստանի 69կգ քաշային ծանրորդ Առաքել Միրզոյեանը երկամարտում ցոյց տալով 310կգ արդիւնք 140 հրում եւ 170 պոկում վարժութիւնում՝ նուաճեց ախոյեանի կոչումն: Նա 8 կգ-ով առաջ անցաւ 2-րդ տեղը զբաղեցրած ոււմին Ռազուան Մարտանից:

105կգ քաշային ծանրորդ Սեւակ Սահակեանը ցոյց տալով 372կգ արդիւնք երկամարտում՝ 171կգ հրում եւ 201կգ պոկում վարժութիւնում, նուաճել է ծանրամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութեան փոխախոյեանի կոչումը՝ արժանանալով արծաթէ մետալի:

Մրցաշարում արծաթէ մետալ է նուաճել նաեւ գերծանր քաշային ծանրորդ Ռուբէն Ալեքսանեանը՝ 412 կգ արդիւնքով՝ 157կգ հրում եւ 225կգ պոկում վարժութիւնում:

Աղասի Աղասեանը 77կգ քաշային կարգում 327կգ արդիւնքով՝ 146կգ հրում եւ 181կգ պոկում վարժութիւնում, նուաճել է պրոնզէ մետալ:

Պրոնզէ մետալ է նուաճել նաեւ 85կգ քաշային Աղուան Մելիքեանը 346 կգ արդիւնքով երկամարտում՝ 153կգ հրում եւ 193կգ պոկում վարժութիւնում: Իսկ 85կգ քաշային կարգում Արամ Անրիկեանը 345կգ արդիւնքով՝ 153կգ հրում եւ 192կգ պոկում վարժութիւնում զբաղեցրել է 4-րդ տեղը:

32 երկրների 197 մասնակիցների մրցավէճում Հայաստանի թիմը 550 միաւորով գրաւեց 2-րդ պատուաւոր տեղը: 1-ին եւ 3-րդ մրցանակային տեղերը զբաղեցրին Ռուսաստանի (604 միաւոր) եւ Ալբանիայի (485 միաւոր) հաւաքականները:

Աղջիկների 63 կգ քաշային կարգում Հեղինէ Եփրեմեանը գրաւեց 2րդ տեղը: Պոկում վարժութիւնում հայ ծանրորդուհու կարողացաւ բարձրացնել 88 կգ: Հրում վարժութիւնում Հեղինէ կարողացաւ բարձրացնել 107կգ: Երկամարտի արդիւնքում Եփրեմեանը եւ Թուրքիայի ներկայացուցիչ Ֆիգեն Կայան ունէին 190 կգ արդիւնք, սակայն անձնական քաշով Հայաստանի ներկայացուցիչը աւելի թէթեւ էր, ուստի նա էլ արժանացաւ արծաթէ մետալին:

Յաջողութեան հասած երիտասարդներից շատերը յաջորդ տարի արդէն հանդէս են գալու մեծահասակների մրցաշարերին: Խօսքը Արամ Աղրիկեանի, Աղուան Մելիքեանի, Աղասի Աղասեանի մասին է, որոնց տարիքը յաջորդ տարի թոյլ չի տայ հանդէս գալ երիտասարդների մրցաշարերում»:

ՔԱԶ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
 Ամէն Կիրակի երեկոյեան
 Ժամը 10:00-ից 12:30
 Կլէնտլի 280-րդ կայանից

Հայ Թելեժամը Կը Վերադառնայ
18ը Ալիքի Վրայ
 Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 Ժամ, այլ Օրուան 24 Ժամերը
Շաբաթը 7 օր անվճար
 Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ
 Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել
 Հայկական Թելեժամ (818) 982-2400

The Armenian Teletime
Is Back On Channel 18
 Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day
7 Days Per Week, Free
 No Subscription Fee - Plus 40 Additional Channels
 For info call The Armenian Channel (818) 982-2400

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
 Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով:
 G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԵՐԷԿ, ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ

Շարունակում է 6-էն

են հակառակ միտումներ: Այսօր ինտիտուցիոնալ բարեփոխումների բացակայությունը հանգեցրել է առողջապահության համակարգի բարձր ծախսատարությունը եւ ծայրայեղ ցածր արդիւնաւէտութեանը: Օրինակ, եթէ ուսումնասիրենք ցանկացած բժշկական հիմնարկի ծախսերի կառուցուածքը, կը տեսնենք, որ 70-80%-ը պահպանման ծախսեր են եւ միայն 20-30%-ն է ծախսում հիւանդի բուժման վրայ: Ուստի, եթէ քայլեր չձեռնարկուեն առողջապահության համակարգի կառուցուածքային արդիւնաւէտութեան բարձրացման ուղղութեամբ, հետագայ ֆինանսական միջոցների աւելացումը կարելի է դիտարկել որպէս յանցագործություն հայաստանի Հանրապետութեան հարկատուների նկատմամբ: Այսպիսով, ժամանակն է երկրի պահանջներին յարիր առողջապահության համակարգի կառուցուածք ձեւաւորելու խնդիր դնել եւ աստիճանաբար այն լուծել:

- Ձեր կարծիքով՝ որքանով է կառավարութեան 2008-2012թթ. ծրագիրը նպաստելու առողջապահութեան բարելաւմանը:

- Նախ նշեմ, որ առողջապահության համակարգի նպատակն է ամրապնդել, պահպանել եւ վերականգնել բնակչութեան առողջութիւնը: Մինչ ծրագրին անցնելը, կ'ուզենայի ընդգծել, որ ցանկացած համակարգի յատկապէս առողջապահութիւնը բարեփոխելու համար, անհրաժեշտ են առնուազն երեք բաղադրիչներ՝ քաղաքական կամք, արհեստավարժութիւն եւ ֆինանսներ: Եկէք հիմա գնանք բացառման սկզբունքով, թէ ինչու չունենք այս ամէնը: Նախ չկայ քաղաքական կամք, որովհետեւ իշխանութեան բարձր ատեններում բարեփոխումներ իրականացնելու մոտիվացիան բացակայում է, քանզի նրանք եւ իրենց մերձակորները նախընտրում են բուժուել արտերկրում: Երկրորդ բաղադրիչը՝ արդեօ՞ք այսօր իշխանութեան կառուցներում եւ մասնաւորապէս առողջապահութիւնում ներգրաւուած են արհեստավարժ կազմակերպիչներ: Բարեփոխումների ընթացքի գնահատումը ցոյց է տալիս, որ, իհարկէ՝ ոչ: Ինչ վերաբերում է երրորդ բաղադրիչին՝ ֆինանսաւորմանը, դրան անդրադարձել ենք վերեւում: Սակայն ուզում եմ նշել, որ կառավարութեան ծրագրում առողջապահութեանը յատկացուող ֆինանսական միջոցները 2012 թուականին նախատեսուած է հասցնել ՀՆԱ-ի 2,2%-ին, այն դէպքում, երբ Եւրոպական տարածաշրջանի երկրներում երաշխաւորուած նուազագոյն ցուցանիշը կազմում է ՀՆԱ-ի 5%-ը: Չեմ հասկանում, թէ ում կողմից է պարտադրուած տարածաշրջանային կենտրոններ ձեւաւորելու հարցը ընդգրկել կառավարութեան ծրագրի մէջ, որովհետեւ դա մեր առողջապահութեան, կառավարութեան գլոբալ խնդիրը չէ: Դրանք բիզնես-ծրագրեր են, որոնք կարող են իրականացուել առանց հանրութեանը հանդիսաւոր ներկայացնելու: Մեր շրջափակման մէջ գտնուելու, հարեւանների հետ կոմունիկացիաներ, յարաբերութիւններ չունենալու, բիւջէի խզուել ֆինանսաւորման պարագայում՝ տարածաշրջանային

կենտրոնների մասին խօսելն ուղղակի լուրջ չէ: 2008թ. բիւջէում ամրագրուած է մի ծրագիր՝ «Հանրապետութիւնից դուրս բուժման ուղեգրուած հիւանդների ճանապարհածախսի փոխհատուցում»: Տարածաշրջանային կենտրոն դառնալու յաւակնութիւններ ունեցող երկիրը իր հիւանդներին ֆինանսներ է տրամադրում եւ ուղեգրում է Մոսկուա, Սիմֆերոպոլ, Սանկտ Պետերբուրգ եւ Ուֆա: Սա զաւեշտ է:

Ողջունելի կը լինէր, որ ծրագրում ընդգրկուէր հանրային առողջութեան ներկայ վիճակը եւ թիրախ ուղղութիւններ ընտրուէին ու կոնկրետ ծրագրեր ներկայացուէին: Ինչպէս նաեւ ամրագրուէին բնակչութեան առողջութեան յստակ եւ գնահատելի ցուցանիշներ, որոնց պէտք է ձգտուէին հասնել ողջ համակարգի ենթակառուցուածքները: Կառավարութեան ծրագրի մնացած ուղղութիւնները հիմնականում նուիրուած են հիւանդութիւնների բուժման խնդիրներին եւ տպաւորութիւն է ստեղծուում, որ մեր երկրում գործում է ոչ թէ առողջապահութեան համակարգը, այլ հիւանդապահութեան:

-Ի՞նչ պէտք է անել:

-Ներկայումս ահագնացող են բնակչութեան առողջական վիճակը արտացոլող ցուցանիշների բնութագիրը եւ միտումները: Սոցիալական կարեւորագոյն նշանակութիւն ունեցող այնպիսի հիւանդութիւններ, ինչպիսիք են՝ սրտանոթային համակարգի հիւանդութիւնները, չարորակ նորագոյացութիւնները, շարունակում են զբաղեցնել առաջնային տեղերը ընդհանուր մահացութեան կառուցուածքում, ինչպէս նաեւ նկատուած է աճի միտում: Մեզանում առկայ է բժշկական օգնութեան որակի ոչ բաւարար մակարդակ: Առողջապահական ծախսերը բաւականաչափ ցածր են: Անհանգստացնող են բուժօգնութեան ստուերային ծախսերը: Այժմ փորձեմ ներկայացնել ՄԴ-ՀԿ-ի մօտեցումները առողջապահութեան բարեփոխումների վերաբերեալ: Մեր կարծիքով, օրակարգային են միջազգայնօրէն ընդունուած հիմնարար սկզբունքները՝ արդարութեան, սոցիալական համերաշխութեան, մատչելիութեան, հաւասարութեան արմատաւորման հիմնահարցերը՝ առողջապահութիւնում:

Անհրաժեշտ է համակարգում իրականացնել շուկայական եւ սոցիալական արժէքների համադրում եւ գուզակցում: Նախ եւ առաջ հրատապ են օրէնսդրական դաշտի բարելաւման խնդիրները մի շարք օրէնքների ընդունման ճանապարհով՝ ՀՀ առողջապահութեան մասին, Հանրային առողջութեան մասին, Բժշկական ապահովագրութեան մասին, Հիւանդների իրաւունքների մասին եւ այլն: Պէտք է ապահովել առողջապահութեան համակարգի կառուցուածքային եւ կառավարման բարեփոխումների խորացումը եւ շարունակականութիւնը: Մասնաւորապէս՝ արդիականացում, ռաջիոնալացում, կորպորատիւ կառավարում, ինչպէս նաեւ համակարգում հաշուետու լինելու սահմանումը: «Ո՞վ, ո՞ւմ առաջ, ինչի՞» համար, ինչպէ՞ս եւ ե՞րբ»: Յստակեցման կարիք ունի բնակչութեան առողջութեան համար պատասխանատուութեան տարանջատումը պետութեան, գոր-

ծատուի եւ անհատների միջեւ: Աւարտին պէտք է հասցնել առողջապահութեան համակարգի ֆինանսաւորման կառուցուածքային բարեփոխումները, մասնաւորապէս՝ Պետական առողջապահական գործակալութիւնը (ՊԱԳ) դուրս բերել ՀՀ ԱՆ կառուցուածքից եւ այն վերակազմաւորել պետական ապահովագրական հիմնադրամի՝ որպէս նախընտրելի տարբերակ: Հակառակ դէպքում՝ ՀՀ առողջապահութեան նախարարութեան ենթակայութեան տակ գտնուող բուժօգնութիւն իրականացնող բաժնետիրական ընկերութիւնների կառավարումը փոխանցել Երեւանի քաղաքապետարանին եւ համապատասխան մարզպետարաններին՝ ՊԱԳ-ը թողնելով ՀՀ առողջապահութեան նախարարութեան կազմում: Այսպիսով, պահպանուած է բուժօգնութիւն իրականացնող եւ բուժօգնութիւնների գնորդ կառուցների տարանջատման սկզբունքը: Եւ վերջինը՝ փաստել առողջապահութեան բնագաւառի ֆինանսաւորման բարեփոխումների այնպիսի թիւերը եւ վերադառնալ 1997 թուականին գործող առողջապահութեան համակարգի ֆինանսաւորման սկզբունքներին: Այն է՝ պետութեան կողմից երաշխաւորուած անվճար բուժօգնութեան պետական պատուէր տեղադրող եւ ֆինանսաւորող ճանաչել ՀՀ առողջապահութեան նախարարութիւնը, Երեւանի քաղաքապետարանը եւ հանրապետութեան տասը մարզպետարանները: Ժամանակն է իրականացնել բնակչութեանը մատուցուող բժշկական օգնութեան փոխհատուցման բազմաձեւութեան ներդրում՝ պետական բիւջէ, տեղական բիւջէներ, բժշկական ապահովագրութիւն, համալճար, անհատական բժշկական հաշիւներ եւ ուղղակի վճարումներ: Ֆինանսական միջոցների արդիւնաւէտ օգտագործման նպատակով Երեւան քաղաքում պետութեան կողմից

երաշխաւորուած բուժօգնութեան փոխհատուցման պայմանագրերի կնքումը իրականացնել մրցութային ճանապարհով: Կրկին կը ցանկանայի մատնանշել մատուցուող բժշկական ծառայութիւնների որակի կառավարման եւ վերահսկման համակարգի ներդրման անհրաժեշտութիւնը:

Եւ վերջում ամենակարեւորը՝ անցում հիւանդապահութիւնից դէպի առողջապահութիւն: Անցումը պէտք է կատարուի հանրային առողջութեան ամրապնդմանը նպաստող լրջագոյն, հիմնարար, համապետական, տարածքային, ուղղահայեաց եւ հորիզոնական առողջապահական ծրագրերի միջոցով: Վերոյիշեալ ծրագրերը իրականացնելու համար հրատապ է եւ արդիական բժշկական համասարանում հանրային առողջութեան ֆակուլտետի հիմնումը, որը կը նպաստի համապատասխան մասնագիտական ներուժի ձեւաւորմանը: Անկեղծ լինելու համար պէտք է նշեմ, որ ՄԴ-ՀԿ-ն այս խնդիրների վերաբերեալ ունի արդէն ձեւաւորուած եւ համակարգուած իր մօտեցումը, որտեղ արծարծուած են բազմաթիւ հրատապ եւ հեռանկարային խնդիրներ, սակայն մէկ հարցադրոյցի ընթացքում այս ամէնը ներկայացնելն ուղղակի հնարաւոր չէ:

- Ինչպէ՞ս էք պատկերացնում Ձեր առաջարկների իրականացումը:

- Մեր կուսակցութիւնը, ինչպէս գիտէք, մաս է կազմում ձեւաւորած Հայ ազգային կոնգրեսին, որն էլ, իր հերթին, արտայայտում է հասարակութեան լայն հատուածների շահերը: Վստահ եմ, որ կոնգրեսում դաշինք կնքած կուսակցութիւնների համատեղ ջանքերի շնորհիւ կը կարողանանք բարեփոխել եւ վերակենդանացնել հանրութեան համար կենսարար այս համակարգը:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՈՒԻԼԻԸՍ ՍԱՐՈՅԵԱՆ՝ ՀԱՆՃԱՐԵՂ ԳՐՈՂԸ

Շարունակում է 13-էն

«Խելառ» վերաբերմունքով ու կեցուածքով, աներեւակայելիօրէն անտրամաբանական եւ անիրապաշտ իրենց նախաձեռնութիւններով եւ երազանքներով արտասովոր: Այս բոլորը սակայն, այնքան վարպետօրէն թելադրուած՝ որպէս հետեւանք՝ կոտորած տեսած, հայրենի հողը կորսնցուցած, գաղթական դարձած հայ մարդուն անչափելի կսկծանքով եւ համայնակուլ կարօտով: Այսպէս, որպէս նմոյշ առնենք: «Նուռի Ծառերը» պատմուածքը: Խնդրոյ առարկան Մելիք հօրեղբայրն է: Մեծ երեւակալութեան տէր եւ բանաստեղծական խառնուածքով ազարակատէր մը՝ որ իր ամբողջ հարստութիւնը ի սպաս կը դնէ գեղեցիկին եւ ոչ թէ օգտակարին կամ շահաբերին: Ան գեղեցկութեան, հայկական կարօտի սիրոյն կը ձեռնարկէ հարիւր նուռի ծառեր տնկել, անոնց ծաղկիլն ու աճիլը տեսնելու վայելքը ապրելու համար: Բնաւ նկատի չառնէր որ իր հողը անջրդի, անապատային հող է: Գործնական մարդ չէ ան, այլ՝ երազին ու կարօտին զոհն է: Իրեն համար կարեւոր չէ թէ ծառերը վտիտի մնալով մեծ բերք կրնան չտալ: Կարեւորը նուռի, եւ անոր հետ կապուած հայրենի յիշատակները կարօտն է: «Եւ երբ չորս տարի ետք վերջապէս ծաղկեցան ծառերը, մեծ յաղթանակի օր մը եղաւ հօրեղբորս համար: Ուրախու-

թեան գրեթէ խելքը թուցնէր պիտի գանտք դիտելով: Շատ գեղեցիկ էին: Բայց միայն այդքան: Պտուկ չբուսնեցին: Հօրեղբայրս միայն երեք փոքր նուռեր ստացաւ որպէս բերք: Մէկ հատը ինք կերաւ, միւս՝ ես, իսկ վերջինն ալ գրասենեակէն կախեց որպէս զարդ: ... Ան կորսնցուց հողն ու ծառերը եւ ամբողջ հարստութիւնը»:

Նմանակերպ երեւոյթներ կը պարզուին «Գեղեցիկ Սպիտակ Ձիուն Ամառը», ինչպէս նաեւ «Ճամբորդութիւն Դէպի Հանֆորտ», պատմուածքներուն մէջ, ուր անսովոր տիպարներու, Մուրատի մը, Խոսրովի մը, Ճորկիի մը սքանչելի կերպարները կու գան ընդգծելու երազին, կարօտին, գեղեցիկին, բարութեան եւ կենսասիրութեան առաջնահերթութիւնը կեանքի այլ նիւթական արժէքներուն վրայ: Անոնք երեւոյթով խելառ գիծեր ունին իրենց նկարագրին մէջ, իրենց վերաբերմունքն ու հակադարձութիւնները միշտ երեւութապէս չեն հնազանդիր տրամաբանական վերլուծումի, սակայն եւ այնպէս անոնք կրողն են հոգեկան արժէքներուն, մարդասիրութեան եւ բարութեան: Իրենց երեւութական խելառութիւնը աղն ու համեմունքն են անշահախնդիր կեանքի եւ լաւատեսութեան իրենց ձգտումով եւ մեր ժողովրդին անեղծ մնացած առաքինութիւնները կը դրսեւորեն:

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՓԱՌԱՏՕՆԸ



Photos by Karin Bekarian and Mike Khatchadourian

